

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ



ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵՐԵՔ
ԱՄԻՍՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2021

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՆԵՐԱԾԱԿԱՆ ՄԱՍ	3-4 էջ
2. ԱՄՓՈՓԱԳԻՐ	5-9 էջ
3. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ	9 էջ
4. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ	9-11 էջ
5. ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ	11-27 էջ
6. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՄԲ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԱՅԼ ՓԱՍՏԵՐ	27-37 էջ
7. ՀԵՏՀՍԿՈՂԱԿԱՆ ԳՈՐԾՆԹԱՑ 38 էջ	37-38 էջ
8. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ էջ	38-40 էջ

1.ՆԵՐԱԾԱԿԱՆ ՄԱՍ

Հաշվեքննության հիմքը	ՀՀ հաշվեքննիչ պալատի 2021 թվականի մայիսի 11-ի թիվ 122-Ա որոշում:
Հաշվեքննության օբյեկտը	ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն:
Հաշվեքննության առարկան	Մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեություն:
Հաշվեքննության չափանիշները	«Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենք, «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենք, «Դրամարկղային գործառնությունների մասին» ՀՀ օրենք, «Գանձապետական համակարգի մասին» ՀՀ օրենք, ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 25-ի թիվ 1112-Ն որոշում, ՀՀ կառավարության 2018 թվականի փետրվարի 15-ի թիվ 163-Ն որոշում, ՀՀ կառավարության 2007 թվականի մայիսի 31-ի թիվ 730-Ն որոշում, ՀՀ կառավարության 2004 թվականի օգոստոսի 5-ի թիվ 1324-Ն որոշում, ՀՀ կառավարության 2014 թվականի ապրիլի 17-ի թիվ 534-Ն որոշում, ՀՀ ֆինանսների նախարարի մարտի 13-ի թիվ 254-Ն հրաման, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2018 թվականի հունիսի 1-ի 69-Ա/1 հրաման, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2014 թվականի հունիսի 30-ի թիվ 79-Ա հրաման, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2019 թվականի հունիսի 13-ի թիվ 751-Ն հրաման, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2014 թվականի հուլիսի 30-ի 79-Ա հրաման և կանոնակարգող այլ նորմատիվ իրավական ակտեր:
Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը	2021 թվականի հունվարի 1-ից մինչև 2021 թվականի մարտի 31-ը ներառյալ:
Հաշվեքննության կատարման	2021 թվականի մայիսի 19-ից մինչև 2021 թվականի հուլիսի 31-ը:

Ժամկետը

Հաշվեքննության մեթոդաբանությունը

Հաշվեքննությունն իրականացվել է «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի, Հաշվեքննիչ պալատի ֆինանսական և համապատասխանության հաշվեքննության գործող մեթոդաբանությունների համաձայն:

Իրականացվել է ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություն, որի ընթացքում կիրառվել են գնում, դիտարկում, հարցում, արտաքին հաստատում, վերլուծական ընթացակարգ, վերահաշվարկ ընթացակարգերը:

Հաշվեքննությունն իրականացրած կառուցվածքային ստորաբաժանում

Հաշվեքննությունն իրականացվել է ՀՀ հաշվեքննիչ պալատի առաջին վարչության կողմից, որի աշխատանքները համակարգում է ՀՀ հաշվեքննիչ պալատի անդամ Կարեն Կարապետյանը:

2. ԱՄՓՈՓԱԳԻՐ

2.1 Մի շարք դեպքերում նախարարության կողմից ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացված երեք ամիսների Ձև-2 հաշվետվությամբ նշված փաստացի ծախսերում չի արտացոլվել որոշ միջոցառումների մասով երեք ամիսների տարբեր ամիսներին կատարված աշխատանքների վերաբերյալ հայտերի /կատարողականների/ գումարները: Այսինքն, ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացված որոշ միջոցառումների մասով Ձև-2 հաշվետվությամբ նշված

փաստացի ծախսերի ցուցանիշը չի համապատասխանում երեք ամիսների ընթացքում փաստացի կատարված ծախսերին: Մասնավորապես. թվով 4 դեպքում ընդամենը 13,253.11 հազ. դրամի չափով աշխատանքներ/ծառայություններ է կատարված երեք ամիսների տարբեր ամիսներին և սահմանված ժամանակահատվածի ընթացքում հայտ /կատարողական/ է ներկայացված նախարարություն, մինչդեռ դրանք չեն ներառվել ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացված երեք ամիսների Ձև-2 հաշվետվությամբ նշված փաստացի ծախսերում:

Այսպիսով, առկա է անհամապատասխանություն «Գանձապետական համակարգի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի և ՀՀ ֆինանսների նախարարի 13.03.2019 թվականի թիվ 254-Ն հրամանի «օրինակելի ձև Հ-2 լրացման պահանջներ» բաժնի 9-րդ կետով, «Հավելված 1-ի «Ընդհանուր դրույթներ» բաժնի» 2-րդ կետի 3-րդ ենթակետով, «Հաշվետվությունների կազմն ու բովանդակությունը» բաժնի 5-րդ և «Հաշվետվությունների ամփոփումն ու ներկայացումը» բաժնի 14-րդ կետերով սահմանված պահանջների հետ:

Միևնույն ժամանակ անհրաժեշտ է նշել, որ նախարարության կողմից 2020 թվականի ՀՀ պետական բյուջեի երեք, վեց և ինն ամիսների կատարողականի նկատմամբ հաշվեքննությունների ընթացքում նույնպես արձանագրվել էին ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացված հաշվետվություն Ձև-2-ում նշված ցուցանիշների անհամապատասխանություններ, մասնավորապես առաջին եռամսյակի համար ներկայացված հաշվետվությունում չէր արտացոլվել թվով 18 ծրագրային միջոցառումների ընդամենը՝ 86,641.88 հազ. դրամի կատարողականների գումար, վեց ամիսների համար ներկայացված հաշվետվությունում չէր արտացոլվել թվով 19 ծրագրային միջոցառումների ընդամենը՝ 154,028,69 հազ. դրամի կատարողականների գումար, ինն ամիսների համար ներկայացված հաշվետվությունում չէր արտացոլվել թվով 8 ծրագրային միջոցառումների ընդամենը՝ 167,294.39 հազ. դրամի կատարողականների գումար: Նշված ժամանակաշրջանների ընթացքի եզրակացությունները կազմելիս արվել են առաջարկություններ նշված անհամապատասխանությունները, ինչպես նաև արձանագրված այլ փաստերը վերացնելու ուղղությամբ, որին ի պատասխան նախարարությունը տեղեկացրել է, որ ձեռնարկել է համապատասխան միջոցներ՝ համապատասխան հրամաններ, հանձնարարականներ, արձանագրված անհամապատասխանությունները և թերությունները վերացնելու ուղղությամբ: Արդյունքում ուսումնասիրելով 2020 թվականի տարեկան կատարման ցուցանիշների համապատասխանությունը ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացված հաշվետվություն Ձև-2-ում նշված ցուցանիշների հետ, անհամապատասխանություններ չեն արձանագրվել:

2.2 Միևնույն ժամանակ դրա հետ կապված «Հիմնարկի դեբիտորական, կրեդիտորական պարտքերի և պահեստավորված միջոցների մասին» հաշվետվություններում չի ներառվել երեք ամիսների ընթացքում տարբեր ամիսներին գոյացած կրեդիտորական պարտքերը՝ նույն 13,253.11 հազ. դրամի չափով:

2.3 Վերլուծելով փաստացի ծախսերի և հաշվետու ժամանակաշրջանի ճշտված պլանի ցուցանիշների հարաբերակցությունը արձանագրվեց, որ մի շարք ծրագրային միջոցառումների դեպքերում առկա է նաև գերակատարումներ: Ընդ որում կատարողականների ցուցանիշները որպես կանոն հաշվարկվում են հիմք ընդունելով դրամարկղային ծախսի ցուցանիշը: Սակայն եթե հաշվի առնենք փաստացի ծախսի ցուցանիշը, որը իրենից ներկայացնում է հաշվետու ժամանակաշրջանում փաստացի կատարված աշխատանքները, ապա փաստացի ծախսի և ճշտված պլանի ցուցանիշների հարաբերակցությունը կարտահայտի հաշվետու ժամանակաշրջանում կատարված աշխատանքների փաստացի կատարողականը: Մասնավորապես թվով 6 ծրագրային միջոցառումների դեպքում առկա է ճշտված պլանի նկատմամբ հաշվետու ժամանակաշրջանում իրականացված փաստացի ծախսերի գերակատարում:

2.4 Թվով 12 ծրագրային միջոցառումների դեպքում՝ ընդհանուր 254,693.0_հազ. դրամ ճշտված պլանով առկա է երեք ամիսների պլանավորում, սակայն դրամարկղային ծախսի կատարողականը 0% է եղել:

2.5 Հաշվեքննության արդյունքում արձանագրվել է ուռչացված պլանավորման դեպք, մասնավորապես,

1141-12001 ծր. /Երեխաների շուրջօրյա խնամքի բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություններում խնամվող դպրոցում սովորող երեխաներին դրամական աջակցության տրամադրում/- 2021թ. Տարեկան 6,372.0 հազ. դրամ ճշտված պլանը անհամեմատ ուռճացված է: Այսպես, եթե հաշվարկենք պլանային շահառուների թվաքանակով /62.5 մարդ/ և ՀՀ կառ. 05.08.2004թ. թիվ 1324-Ն որոշման 8-րդ չափորոշիչով սահմանված առավելագույն վճարման գումարով՝ 3000 դրամ, ապա տարեկան պլանային թիվը չպետք է գերազանցեր 2,250.0 հազ.դրամը ($62.5 \times 3000 \times 12$): Մինչդեռ տարեկան պլանում նախատեսվել է 6,372.0 հազ.դրամ:

2.6 **Առկա են դեպքեր** /1068-12003 ծր., <<Երիտասարդ և երեխա ունեցող ընտանիքների բնակարանային ապահովման աջակցություն>> և <<1141-12007 ծր., Բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունների շրջանավարտների համար բնակարանների վարձակալություն>> միջոցառումներ/, **երբ ՀՀ ֆինանսների նախարարության,, Հայաստանի Հանրապետության 2021 թվականի**

առաջին եռամսյակի պետական բյուջեի ելքային ծրագրերի և միջոցառումների գծով արդյունքային (կատարողական) ցուցանիշների կատարման վերաբերյալ՝ ըստ միջոցառումները կատարող հանրային իշխանության մարմինների,, հաշվետվության հավելված 11.1-ի <<տարբերության պատճառները>> սյունակում նախարարության կողմից ներկայացվել է հաշվետու ժամանակաշրջանի ճշտված պլանի և փաստացի ցուցանիշների տարբերության պատճառները, որոնք հիմնավոր չեն կամ չեն ներկայացվել իրական պատճառները:

2.7 Հիմք ընդունելով շահառուների թվաքանակի տարեկան պլանավորումը՝ արձանագրվել է եռամսյակային սխալ պլանավորում, այսպես օրինակ

1141-11018 ծր. /Երեխաների խնամքի ցերեկային ծառայությունների տրամադրում/- Շահառուների տարեկան ճշտված պլանը կազմել է 3277, 1-ին եռամսյակի համար պլանավորվել է 819.25, փաստացին կազմել է 1828 շահառու: Վերը նշված արդյունքային ցուցանիշներում 1-ին եռամսյակի համար պլանավորված 819.25 շահառուների թվաքանակը անհիմն է, քանի որ նշված 819.25 թիվը մեխանիկորեն տարեկան պլանի 1/4 մասն է, այնինչ նշված միջոցառումը նախատեսում է սպասարկել ամսական նույն շահառուների քանակ, ինչ որ նախատեսված է տարեկան պլանում, այսինքն եռամսյակային պլանը պետք է համընկնի տարեկան պլանին, եթե այլ հանգամանքեր չկան դրանք փոփոխելու:

2.8 Առկա է դեպք, երբ ֆինանսական հաշվետվություններում ճշտված պլանի արժեքային ցուցանիշը արտացոլում է ոչ թե երեք ամիսների համար նախատեսված աշխատանքների ծավալը, այլ երկու ամիսների՝ հունվար և փետրվար: Այսպես՝

1117-11004 ծր. /Սոցիալական պաշտպանության ոլորտի տեղեկատվական համակարգի սպասարկման (կատարելագործման), շահագործման և տեղեկատվության տրամադրման ծառայություններ/- Միջոցառումն իրականացնող է հանդիսանում «Նորք սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամը: Հիմնադրամից նախարարություն կատարողականներ է ներկայացվել՝ հունվար ամսվա համար՝ 26,854.6 հազ. դրամ, փետրվար ամսվա համար՝ 26,854.6 հազ. դրամ, մարտ ամսվա համար՝ 26,115.3 հազ. դրամ: Հաշվի առնելով նշված ցուցանիշները կարելի է փաստել, որ ճշտված պլանը 1-ի եռամսյակի համար 53,709.2 հազ. դրամ թիվը ոչ թե երեք ամիսների համար նախատեսված աշխատանքների ծավալն է, այլ

իրենից ներկայացնում է հունվար և փետրվար ամիսների համար նախատեսված աշխատանքների ծավալը, որը ըստ համապատասխան պայմանագրի պետք է վճարվեր փետրվար և մարտ ամիսներին: Իրական պլանը 1-ին եռամսյակում 53,709.3 հազ. դրամի փոխարեն պետք լիներ 79,824.5 հազ. դրամ:

2.9 Միևնույն ժամանակ արձանագրվել են դեպքեր, երբ 2020 թվականի տարվա վերջի մնացորդը, որը հանդիսացել է 2021 թվականի տարեսկզբի դեբիտորական պարտք, հետ է վերադարձվել պետբյուջե սահմանված ժամկետից ուշ: Այսպես՝

- 1153-11001 ծր. /Մեթոդաբանական ձեռնարկների մշակում, հետազոտությունների անցկացում և սոցիալական ապահովության ոլորտի կադրերի վերապատրաստում/- Համաձայն հաշվետվետվություն ձև 4-ի դեբիտորական պարտքը տարեսկզբին կազմել է 17,098.0 հազ. դրամ, որը վերադարձվել է պետբյուջե 01.02.2021թ.՝ դրամաշնորհի պայմանագրի 4.6 կետով սահմանված ժամկետից 10 օր ուշացումով:
- 1153-11002 ծր. /Մասնագիտական կողմնորոշման, համակարգի մեթոդաբանության ապահովման և կադրերի վերապատրաստման ծառայություններ/-Համաձայն հաշվետվություն ձև < 4-ի դեբիտորական պարտքը տարեսկզբին կազմել է 4,175.0 հազ. դրամ, որը 01.02.2021թ. վերադարձվել է պետբյուջե՝ դրամաշնորհի պայմանագրի 4.6 կետով սահմանված ժամկետից 10 օր ուշացումով:

2.10 Թվով 5 դեպքերում կատարողականների ցածր մակարդակը պայմանավորված է դրամաշնորհի մրցույթները ուշ հայտարարելու մեջ, ընդ որում դրամաշնորհի մրցույթները, ինչպես նաև այդ մրցույթների արդյունքում կնքված պայմանագրերի հիման վրա մատուցվելիք ծառայությունները կարող էին ժամանակին կատարվել, եթե նախարարության կողմից մրցույթները հայտարարվեին Գնումների մասին ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի համապատասխան, այն է՝ մինչև ֆինանսական միջոցներ նախատեսվելը նախարարությունը կարող էր կնքել պայմանագրեր՝ պայմանով, այն դեպքում, երբ նախորդ տարի նմանատիպ պայմանագրերը՝ կնքվել էին պայմանով:

3. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից պահանջվել է ամբողջական տեղեկատվության տրամադրում: Ուսումնասիրելով ներկայացված

տեղեկատվությունը, օգտվելով ՀՀ ֆինանսների նախարարության գանձապետական վճարահաշվարկային էլեկտրոնային /LSFINANCE և LSREP/ համակարգերի շտեմարաններից, ինչպես նաև հասանելի այլ պաշտոնական աղբյուրներից ստացվել է բավարար տեղեկատվություն սույն հաշվեքննությունն իրականացնելու համար:

2021 թվականի ՀՀ պետական բյուջեի երեք ամիսների հաշվեքննության իրականացման համար որպես ռիսկային խնդիր է դիտարկվել՝ նախատեսված ծրագրերի և միջոցառումների մասով հաշվետու ժամանակահատվածի բյուջեի կատարողականի թերակատարումների և բյուջեի կատարողականի վերաբերյալ ՀՀ կառավարություն ներկայացրած հաշվետվություններում բերված ցուցանիշներում փաստացի կատարվածի իրական ծավալները մասնակի ընդգրկելու, իսկ որոշ դեպքերում առհասարակ չներառելու խնդիրները:

ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2021 թվականի ՀՀ պետական բյուջեի երեք ամիսների մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեության նկատմամբ իրականացված հաշվեքննության ընթացքում էական անհամապատասխանություններ և խեղաթյուրումներ չեն հայտնաբերվել:

4. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՕՐՅԵԿՏԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2021 թվականի բյուջեի ծախսերի տարեկան պլանը կազմել է 27,229,168.31 հազ. դրամ, տարեկան ճշտված պլանը կազմել է 17,498,511.98 հազ. դրամ: Ընդհանուր առմամբ նվազեցումները և ավելացումները հաշվի առած՝ կատարվել է 9,730,656.33 հազ. դրամի չափով նվազեցում: Նվազեցումը հիմնականում պայմանավորված է «Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների սոցիալական փաթեթով ապահովում» 1015-12001 ծրագրով նախատեսված 10,440,162.0 հազ. դրամ գումարը բյուջետային համապատասխան մարմիններին բաշխմամբ: Կատարվել է նաև ավելացումներ, օրինակ «Սոցիալական ապահովություն» 1205 ծրագրով տարեկան պլանավորում չի իրականացվել, սակայն տարեկան ճշտված պլանով այն սահմանվել է 643,308.8 հազ. դրամ: Նշված ծրագրով նախատեսվել է իրականացնել թվով երեք միջոցառումներ, մասնավորապես 1205-12013 միջոցառում՝ «Ռազմական դրությամբ պայմանավորված՝ ՀՀ համայնքներում հրետակոծության հետևանքով քաղաքացիների անշարժ գույքին հասցված վնասների փոխհատուցում»՝ 7,200.0 հազ. դրամ, 1205-12020 միջոցառում՝ «Ռազմական դրությամբ պայմանավորված՝ դրամական աջակցություն քաղաքացիական անձանց շրջանում զոհերի ընտանիքներին և հաշմանդամություն ձեռք բերած անձանց»՝ 600,000.0 հազ.

դրամ և 1205-12024 միջոցառում՝ «Ռազմական դրությամբ պայմանավորված՝ ՀՀ Սյունիքի մարզի Շուռնուխ և Որոտան բնակավայրերում գտնվող և Ադրբեջանի վերահսկողության տակ անցած բնակելի անշարժ գույքի հասցեում փաստացի բնակված քաղաքացիներին դրամական աջակցություն»՝ 36,108.0 հազ. դրամ:

Երեք ամիսների պլանը կազմել է 5,238,661.0 հազ. դրամ, ճշտված պլանը՝ 4,194,816.67 հազ. դրամ: Ընդհանուր առմամբ նվազեցումները և ավելացումները հաշվի առած՝ կատարվել է 1,043,844.33 հազ. դրամի նվազեցում 19.9%-ի չափով: Նվազեցումը հիմնականում պայմանավորված է «Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների սոցիալական փաթեթով ապահովում» 1015-12001 ծրագրով նախատեսված 1,769,916.0 հազ. դրամ գումարից 1,740,456.0 հազ. դրամը բյուջետային համապատասխան մարմիններին բաշխմամբ, արդյունքում նշված ծրագրով ճշտված պլանը կազմել է 29,460.0 հազ. դրամ: Կատարվել է նաև ավելացումներ, օրինակ «Սոցիալական ապահովություն» 1205 ծրագրով տարեկան պլանավորում չի իրականացվել, սակայն տարեկան ճշտված պլանով այն սահմանվել է 643,308.8 հազ. դրամ, 1-ին եռամսյակի ճշտված պլանը կազմել է 632,904.0 հազ. դրամ: Նշված ծրագրով նախատեսվել է իրականացնել թվով երեք միջոցառումներ, մասնավորապես 1205-12013 միջոցառում՝ «Ռազմական դրությամբ պայմանավորված՝ ՀՀ համայնքներում հրետակոծության հետևանքով քաղաքացիների անշարժ գույքին հասցված վնասների փոխհատուցում»՝ տարեկան և 1-ին եռամսյակի ճշտված պլան՝ 7,200.0 հազ. դրամ, 1205-12020 միջոցառում՝ «Ռազմական դրությամբ պայմանավորված՝ դրամական աջակցություն քաղաքացիական անձանց շրջանում զոհերի ընտանիքներին և հաշմանդամություն ձեռք բերած անձանց»՝ տարեկան և եռամսյակի ճշտված պլանը՝ 600,000.0 հազ. դրամ և 1205-12024 միջոցառում՝ «Ռազմական դրությամբ պայմանավորված՝ ՀՀ Սյունիքի մարզի Շուռնուխ և Որոտան բնակավայրերում գտնվող և Ադրբեջանի վերահսկողության տակ անցած բնակելի անշարժ գույքի հասցեում փաստացի բնակված քաղաքացիներին դրամական աջակցություն»՝ տարեկան ճշտված պլանը 36,108.0 հազ. դրամ, եռամսյակային ճշտված պլանը՝ 25,704.0 հազ. դրամ:

1-ին եռամսյակի դրամարկղային ծախսը կազմել է 2,561,528.32 հազ. դրամ: Ճշտված պլանի և դրամարկղային ծախսի տարբերությունը կազմել է 1,633,288.35 հազ. դրամ, կատարման տոկոսը հաշվետու ժամանակաշրջանի ճշտված պլանի նկատմամբ կազմում է 61.06 տոկոս: Փաստացի ծախսը կազմել է 3,908,734.42 հազ. դրամ, դրամարկղային ծախսի նկատմամբ տարբերությունը կազմում է 1,347,206.1 հազ. դրամ, փաստացի կատարման տոկոսը հաշվի առնելով փաստացի ծախսը /կատարողականը/ ճշտված պլանի նկատմամբ

կկազմի 93.18 տոկոս: Դերիտորական պարտքը կազմել է 2,014,378.99 հազ. դրամ, կրեդիտորական պարտքը՝ 848,568.77 հազ. դրամ:

Հաշվեքննության օբյեկտի ֆինանսական ցուցանիշները ըստ ծրագրերի և միջոցառումների ներկայացվում է կից հավելված 1-ով՝ բյուջետային ծրագրերի աղյուսակի տեսքով, որտեղ ներկայացված է նաև անհամապատասխանությունների վերաբերյալ գրառումները:

5. ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԳՐԱՌՈՒՄՆԵՐ

Վերլուծվել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից 2021 թվականի երեք ամիսների պետական բյուջեի ելքային ծրագրերի և միջոցառումների գծով արդյունքային ցուցանիշների կատարման վերաբերյալ տվյալները: Արդյունքում արձանագրվել է, որ ծրագրային միջոցառումների ճնշող մեծամասնությունում դրամարկղային ծախսի մասով առկա է ճշտված պլանի նկատմամբ թերակատարումներ: Դրանց գերակշռող մասում թերակատարումները առկա է նաև փաստացի ծախսի ցուցանիշը հաշվի առնելով: Միևնույն ժամանակ փաստացի ծախսի մասով ճշտված պլանի նկատմամբ որոշ դեպքերում առկա է նաև գերակատարումներ: Մի շարք դեպքերում առկա է նաև դրամարկղային ծախսի մասով 0 կատարողականներ: Հիմնականում որպես թերակատարման, ինչպես նաև դրամարկղային ծախսերի մասով 0 կատարողականների պատճառներ նշվել է երեք ամիսների ընթացքում շահառուների թվաքանակի պակաս լինելը, որոշ ծախսային հոդվածներով փաստացի պակաս ծախս կատարելու, գնման ընթացակարգերի (մրցույթների) պլանավորված ժամանակին չիրականացվելու, չկայանալու կամ չամփոփվելու և համապատասխան պայմանագրերը ուշ կնքելու, որոշ միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ ՀՀ կառավարության որոշումների և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի հրամանների ուշ ընդունվելու, պայմանավորված հարակից այլ աշխատանքները չավարտելու, ինչպես նաև զբաղվածության ծրագրերը՝ զբաղվածության տարածքային գրասենյակների հետ միասին <<Միասնական սոցիալական ծառայությանը>> փոխանցելու հանգամանքներով: Սակայն հարկ է նշել, որ մի շարք դեպքերում նախարարության կողմից ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացված առաջին եռամսյակի Ձև-2 հաշվետվությամբ նշված փաստացի ծախսերում չի արտացոլվել որոշ միջոցառումների մասով երեք ամիսների ընթացքում տարբեր ամիսներին կատարված աշխատանքների վերաբերյալ հայտերի /կատարողականների/

գումարները, ինչը որևէ ձևով չի կարող հիմնավորվել վերը նշված պատճառաբանություններով: Այսինքն, ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացված որոշ միջոցառումների մասով Ձև-2 հաշվետվությամբ նշված փաստացի ծախսերի ցուցանիշը չի համապատասխանում երեք ամիսների ընթացքում փաստացի կատարված աշխատանքներին:

Մասնավորապես. թվով 4 դեպքում ընդամենը 13,253.11 հազ. դրամի չափով աշխատանքներ է կատարված երեք ամիսների ընթացքում փարբեր ամիսներին և հայր /կատարողական/ է ներկայացված նախարարություն, մինչդեռ դրանք չեն ներառվել ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացված երեք ամիսների Ձև-2 հաշվետվությամբ նշված փաստացի ծախսերում: Ընդ որում, այս պարագայում նույն չափով էլ կառաջանար կրեդիտորական պարտավորություններ: Այսպես՝

1. 1141-12002 ծր. /Կենսաբանական ընտանիք տեղափոխված և հաստատություն մուտքը կանխարգելված երեխաների ընտանիքների բնաիրային օգնության փաթեթի տրամադրում/ չներառված՝ 2,628.64 հազ. դրամ:

2021թ. տարեկան ճշտված պլանը կազմել է 34,000.0 հազ. դրամ, 1-ին եռամսյակի ճշտված պլանը՝ 8,500.0 հազ. դրամ: Համաձայն հաշվետվության ձև Հ-2-ի դրամարկղային ծախսը կազմել է 54.0 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 291.6 հազ. դրամ: Դեբիտորական և կրեդիտորական պարտքերի հաշվետվություն ձև-4 ի՝ կրեդիտորական պարտքը կազմել է 237.6 հազ. դրամ: Համաձայն նախարարության տեղեկատվության ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացվող հաշվետվություն ձև 2-ում նշված փաստացի ծախսերում չի ներառվել փետրվար, մարտ ամիսների կատարողական ակտեր՝ 2,628.64 հազ. դրամ ընդհանուր գումարով: Արդյունքում հաշվետվություն Ձև Հ-2 ում արտացոլված ցուցանիշները չի արտացոլում 3 ամիսների կատարված աշխատանքների իրական պատկերը:

2. 1141-11018 ծր./ Երեխաների խնամքի ցերեկային ծառայությունների տրամադրում/ չներառված՝ 7,795.29 հազ. դրամ:

2021թ. տարեկան ճշտված պլանը կազմել է 283,987.8 հազ. դրամ, երեք ամիսների ճշտված պլանը՝ 41,428.4 հազ. դրամ, համաձայն հաշվետվություն ձև-2-ի երեք ամիսների դրամարկղային ծախսը կազմել է 7,591,74 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 15,098.04 հազ. դրամ: Համաձայն հաշվետվություն ձև 4-ի կրեդիտորական պարտքը կազմել է 7,506.3 հազ. դրամ: Համաձայն նախարարության տեղեկատվության 7,795.29 հազ. դրամի մարտ և փետրվար ամիսների կատարողականների գումար չի ընդգրկվել ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացվող հաշվետվություն ձև 2-ում փաստացի ծախսի

գումարի մեջ, ընդ որում նշված գումարի չափով էլ կավելանար կրեդիտորական պարտքերը:

3. 1153-11001 ծր. / Մեթոդաբանական ձեռնարկների մշակում, հետազոտությունների անցկացում և սոցիալական ապահովության ոլորտի կադրերի վերապատրաստում/ չներառված՝ 1,370.0 հազ. դրամ:

Տարեկան ճշտված պլանը կազմել է 104,285.9 հազ. դրամ, երեք ամիսների ճշտված պլանը՝ 25,393.4 հազ. դրամ, Համաձայն հաշվետվություն ձև-2-ի երեք ամիսների դրամարկղային ծախսը կազմել է 23,840,74 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 23,407.7 հազ. դրամ: Համաձայն նախարարության տեղեկատվության 1,370.0 հազ. դրամի մարտ ամսվա կատարողականի գումար չի ընդգրկվել ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացվող հաշվետվություն ձև 2-ում փաստացի ծախսի գումարի մեջ, ընդ որում նշված գումարի չափով էլ կավելանար կրեդիտորական պարտքերը:

4. 1141-11002 ծր. /ՀՀ երեխաների շուրջօրյա խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում խնամվող և հաստատությունում հայտնվելու ոիսկի խմբում գտնվող երեխաների ընտանիք վերադարձնելու և մուտքը հաստատություններ կանխարգելելու ծառայություններ/ չներառված՝ 1,459.18 հազ. դրամ:

2021թ. տարեկան ճշտված պլանը կազմել է 28,427.8 հազ. դրամ, երեք ամիսների ճշտված պլանը՝ 5,728.0 հազ. դրամ: Համաձայն հաշվետվություն ձև Հ-2 -ի դրամարկղային ծախսը կազմել՝ 497,4 հազ. դրամ, փաստացի ծախսը կազմել է 1,357.3 հազ. դրամ, համաձայն դեբիտորական և կրեդիտորական պարտքերի հաշվետվություն ձև Հ-4-ի կրեդիտորական պարտքը տարեվերջին կազմել է 859,9 հազ. դրամ: Համաձայն նախարարության տեղեկատվության 1,459.18 հազ. դրամի կատարողականների գումար չի ընդգրկվել ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացվող երեք ամիսների հաշվետվություն ձև 2-ում փաստացի ծախսի գումարի մեջ, ընդ որում նշված գումարի չափով էլ կավելանար կրեդիտորական պարտքերը:

Հարկ է նշել, որ ՀՀ ֆինանսների նախարարության 13.03.2019 թվականի թիվ 254-Ն հրամանի «օրինակելի ձև Հ-2 լրացման պահանջներ» բաժնի 9-րդ կետի համաձայն «Հիմնարկի կատարած բյուջետային ծախսերի և բյուջետային պարտքերի մասին» աղյուսակի «ԺԱ» սյունակում լրացվում են հաշվետու ժամանակահատվածում հիմնարկի՝ համապատասխան փաստաթղթերով ձևակերպված իրական ծախսերը, ներառյալ կրեդիտորների չվճարված հաշիվները, հաշվարկված աշխատավարձի ու կրթաթոշակների գծով կատարված ծախսերը:

Միննույն ժամանակ ՀՀ ֆինանսների նախարարի 13.03.2019 թվականի թիվ 254-Ն հրամանի՝

- «Հավելված 1-ի «Ընդհանուր դրույթներ» բաժնի» 2-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն «Հաշվետու ժամանակահատված է համարվում տվյալ ֆինանսական տարվա այն ժամանակահատվածը, որի ընթացքում իրականացված գործառույթների վերաբերյալ կամ որի ավարտի դրությամբ ներկայացվում է հաշվետվությունը»:
- «Հաշվետվությունների կազմն ու բովանդակությունը» մասի 5-րդ կետի համաձայն «Հաշվետվության թվային մասն արտացոլում է հաշվետու ժամանակահատվածի ավարտի դրությամբ, տվյալ ժամանակահատվածի կտրվածքով, համապատասխան բյուջեների կատարման, ինչպես նաև հիմնարկների ֆինանսական գործունեության վերաբերյալ թվային ցուցանիշները»:
- «Հաշվետվությունների ամփոփումն ու ներկայացումը» մասի 14-րդ կետի համաձայն «Տարաժամկետ հաշվետվությունները ներկայացվում են շաբաթական, ամսական, եռամսյակային և (կամ) տարեկան պարբերականությամբ, և դրանցում արտացոլվում է հաշվետու մարմնի կողմից հաշվետու ժամանակահատվածի ընթացքում իրականացված որոշակի գործառույթների կամ վերջինիս տրամադրության տակ գտնվող որոշակի ակտիվների և (կամ) պարտավորությունների շարժի մասին տեղեկատվությունը»:

Համաձայն «Գանձապետական համակարգի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի «Պետական մարմնի գլխավոր ֆինանսիստը, սահմանված կարգով պետական հիմնարկներից ստանալով հաշվետվությունները, ամփոփում է դրանք և լիազոր մարմնի սահմանած կարգով ներկայացնում է վերջինիս:

Պետական հիմնարկներից ստացված հաշվետվություններից բացի, գլխավոր ֆինանսիստն ապահովում է նաև պետական մարմնի կողմից իրականացվող միջոցառումների և ծրագրերի կատարման մասին հաշվետվությունների ամփոփումը և լիազոր մարմին ներկայացնելը:

Գլխավոր ֆինանսիստը հաշվետվության հետ միասին լիազոր մարմին է ներկայացնում նաև հաշվետվության մանրամասն վերլուծությունը՝ ծրագրի համեմատ շեղումների պատճառների բացահայտմամբ»:

Այսպիսով, առկա է անհամապատասխանություն «Գանձապետական համակարգի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի և ՀՀ ֆինանսների նախարարի 13.03.2019 թվականի թիվ 254-Ն հրամանի վերը նշված կետերով սահմանված պահանջների հետ, ինչը հիմք է տալիս արձանագրելու, որ հաշվետու ժամանակահատվածի ընթացքում «իրականացված գործառույթները»,

«ակտիվների և շարժի մասին տեղեկատվությունը», «համապատասխան բյուջեների կատարման, ինչպես նաև հիմնարկների ֆինանսական գործունեության վերաբերյալ թվային ցուցանիշները», մասնավորապես երեք ամիսների ընթացքում տարբեր ամիսներին կատարված աշխատանքներ թվով 4 միջոցառումների մասով 13,253.11 հազ. դրամի չափով, ՀՀ ֆինանսների նախարարի թիվ 254-Ն հրամանով սահմանված «Հիմնարկի կատարած բյուջետային ծախսերի և բյուջետային պարտքերի մասին» նախարարության կողմից ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացված ձև Հ-2 հաշվետվություններում չի ներառվել: Միևնույն ժամանակ դրա հետ կապված «Հիմնարկի դեբիտորական, կրեդիտորական պարտքերի և պահեստավորված միջոցների մասին» հաշվետվություններում չի ներառվել երեք ամիսների ընթացքում տարբեր ամիսներին գոյացած կրեդիտորական պարտքերը՝ նույն 13,253.11 հազ. դրամի չափով:

Հաշվեքննության արդյունքում արձանագրվել է ուռչացված պլանավորման դեպք, մասնավորապես.

- 1141-12001 ծր. /Երեխաների շուրջօրյա խնամքի բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություններում խնամվող դպրոցում սովորող երեխաներին դրամական աջակցության տրամադրում/- 2021թ. Տարեկան ճշտված պլանը կազմել է 6,372.0 հազ. դրամ, 1-ին եռամսյակի համար պլանավորվել է 1,593.0 հազ.դրամ: Համաձայն հաշվետվության ձև Հ-2-ի դրամարկղային ծախսը կազմել է 119.0 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 600.0 հազ.դրամ: Դեբիտորական և կրեդիտորական պարտքերի հաշվետվություն ձև-4 ի՝ կրեդիտորական պարտքը կազմել է 481.0 հազ.դրամ: Հաշվի առնելով ձև-2 հաշվետվության փաստացի ծախսի գումարը՝ 1-ին եռամսյակի ճշտված պլանի նկատմամբ՝ կատարողականը կկազմի 37.7%: 2021թ. 1-ին եռամսյակի շահառուների պլանային միջին թիվը նախատեսվել է՝ 62.5 մարդ, փաստացի ծրագրից օգտվել է 74 շահառու՝ „Մարի Իզմիրլյան“ -21 շահառու, „Գավառ“ -53 շահառու: Հարկ է նշել, որ տարեկան պլանային թիվը անհամեմատ ուռճացված է: Այսպես, եթե հաշվարկենք պլանային շահառուների թվաքանակով և ՀՀ կառ. 05.08.2004թ. թիվ 1324-Ն որոշման 8-րդ չափորոշիչով սահմանված առավելագույն վճարման գումարով՝ 3000 դրամ, ապա տարեկան պլանային թիվը չպետք է գերազանցեր 2,250.0 հազ.դրամը ($62.5 \times 3000 \times 12$): Մինչդեռ տարեկան պլանում նախատեսվել է 6,372.0 հազ.դրամ:

Առկա է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 2004 թվականի օգոստոսի 5-ի թիվ 1324-Ն որոշման 8-րդ չափորոշիչով սահմանված դրամական աջակցության առավելագույն չափի և տարեկան ճշտված պլանի չափի միջև:

Առկա են դեպքեր, երբ ՀՀ ֆինանսների նախարարության,, Հայաստանի Հանրապետության 2021 թվականի առաջին եռամսյակի պետական բյուջեի ելքային ծրագրերի և միջոցառումների գծով արդյունքային (կատարողական) ցուցանիշների կատարման վերաբերյալ՝ ըստ միջոցառումները կատարող հանրային իշխանության մարմինների,, հաշվետվության հավելված 11.1-ի <<տարբերության պատճառները>> սյունակում նախարարության կողմից ներկայացվել է հաշվետվության ժամանակաշրջանի ճշտված պլանի և փաստացի ցուցանիշների տարբերության պատճառները, որոնք հիմնավոր չեն կամ չեն ներկայացվել իրական պատճառները:

Այսպես օրինակ՝

- 1068-12003 ծր. / Երիտասարդ և երեխա ունեցող ընտանիքների բնակարանային ապահովման աջակցություն/- Համաձայն հաշվետվություն ձև-2-ի 1-ին եռամսյակի ճշտված պլանը կազմել է 201,690.0 հազ. դրամ, դրամարկղային ծախսը կազմել է 201,562.5 հազ. Դրամ, փաստացի ծախսը՝ 289,091.7 հազ. Դրամ: Համաձայն հաշվետվություն ձև 4-ի կրեդիտորական պարտքը կազմել է 87,529.19 հազ. դրամ: Դրամարկղային ծախսի կատարողականը 1-ին եռամսյակի ճշտված պլանի նկատմամբ կազմել է 99.9%, իսկ փաստացի ծախսի ցուցանիշը հաշվի առնելով կատարողականը կկազմի $143.3 \% / 289,091.7 : 201,690.0 * 100 /$: Ըստ էության փաստացի ծախսը հաշվի առնելով կատարվել է գերակատարում: ՀՀ ֆինանսների նախարարության ,,Հայաստանի Հանրապետության 2021 թվականի առաջին եռամսյակի պետական բյուջեի ելքային ծրագրերի և միջոցառումների գծով արդյունքային (կատարողական) ցուցանիշների կատարման վերաբերյալ՝ ըստ միջոցառումները կատարող հանրային իշխանության մարմինների,, հաշվետվության հավելված 11.1-ի համաձայն շահառուների տարեկան ճշտված պլանը կազմել է 1088, 1-ին եռամսյակի համար համար պլանավորվել է սպասարկել 272 շահառու, փաստացին կազմել է 279 շահառու: Վերը նշված արդյունքային ցուցանիշներում <<տարբերության պատճառները>>

սյունակում նախարարության կողմից ներկայացվել է հաշվետու ժամանակաշրջանի ճշտված պլանի և փաստացի ցուցանիշների տարբերության պատճառները, որտեղ որպես տարբերության պատճառ նշած “պայմանավորված է շահառուների թվաքանակի պակաս լինելու հետ” արտահայտությունը անհիմն է, քանի որ 1-ին եռամսյակի պլանային ցուցանիշների համեմատ փաստացի թերակատարում չկա, մասնավորապես շահառուների փաստացի թվաքանակը ոչ թե պակաս, այլ ավելի է ճշտված պլանից, իսկ դրամարկղային ծախսի կատարողականը կազմել է 99.9%, փաստացի ծախսի ցուցանիշով նույնիսկ առկա է գերակատարում՝ 143.3 %:

- 1141-12007 ծր. /Բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունների շրջանավարտների համար բնակարանների վարձակալություն/-Համաձայն հաշվետվություն ձև-2-ի դրամարկղային ծախսը և փաստացի ծախսը չի կատարվել: ՀՀ ֆինանսների նախարարության „Հայաստանի Հանրապետության 2021 թվականի առաջին եռամսյակի պետական բյուջեի ելքային ծրագրերի և միջոցառումների գծով արդյունքային (կատարողական) ցուցանիշների կատարման վերաբերյալ՝ ըստ միջոցառումները կատարող հանրային իշխանության մարմինների,, հաշվետվության հավելված 11.1-ի համաձայն տարեկան պլանավորվել է վարձակալել 4 բնակարան, առաջին եռամսյակում՝ 4, փաստացին՝ 0: Բնակարանի վարձակալության վճարի չափը սահմանվել է 30.0 հազ. դրամ՝ ներառյալ կոմունալ ծախսերը: Նման պայմաններով նախարարությունը առաջարկել է Գավառի մանկատան տնօրենին՝ սաներից մեկի համար բնակարան վարձակալել, սակայն մանկատան տնօրենը 17.06.2021թ. գրությամբ տեղեկացնում է նախարարությանը, որ ամսական հատկացվող 30.0 հազ. դրամ գումարը բնակարանի վարձակալության և կոմունալ վճարումների համար իրատեսական չէ և այդ իսկ պատճառով նախատեսվող շահառուն հրաժարվել է նշված միջոցառումից օգտվելու հնարավորությունից: Այսինքն կարելի է արձանագրել, որ 1-ին եռամսյակի համար 0 կատարողականի պատճառը ոչ թե <<Տարբերության պատճառները>> սյունակում նախարարության կողմից նշված <<մանկատան շրջանավարտների բնակարանների ձեռքբերման վկայագրերի տամադրումն է>>, այլ վարձակալության և կոմունալ վճարների ամսական տրամադրվող գումարի չափն է: Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ բնակարանների վարձակալության միջոցառումը նախորդ տարիներին չի իրականացվել:

Առկա է անհամապատասխանություն ՀՀ ֆինանսների նախարարության,, Հայաստանի Հանրապետության 2021 թվականի առաջին եռամսյակի պետական բյուջեի ելքային ծրագրերի և միջոցառումների գծով արդյունքային (կատարողական) ցուցանիշների կատարման վերաբերյալ՝ ըստ միջոցառումները կատարող հանրային իշխանության մարմինների,, հաշվետվության հավելված 11.1-ի <<տարբերության պատճառները>> սյունակում նախարարության կողմից ներկայացված հաշվետու ժամանակաշրջանի ճշգրիտ պլանի և փաստացի ցուցանիշների տարբերության պատճառների և իրական պատճառների միջև:

Հիմք ընդունելով շահառուների թվաքանակի տարեկան պլանավորումը՝ արձանագրվել է եռամսյակային սխալ պլանավորում:
Այսպես,

- 1141-11018 ծր. /Երեխաների խնամքի ցերեկային ծառայությունների տրամադրում/-Համաձայն հաշվետվություն ձև-2-ի դրամարկղային ծախսը կազմել է 7,591,74 հազ. Դրամ, փաստացի ծախսը՝ 15,098.04 հազ. Դրամ: Համաձայն հաշվետվություն ձև 4-ի կրեդիտորական պարտքը կազմել է 7,506.3 հազ. Դրամ: Դրամարկղային ծախսի կատարողականը 1-ին եռամսյակի ճշտված պլանի նկատմամբ կազմել է 18.3%, իսկ փաստացի ծախսի ցուցանիշը հաշվի առնելով կատարողականը կկազմի $36.4 \% /15,098.04:41,428.4 \cdot 100/$ Մինևույն ժամանակ համաձայն նախարարության տեղեկատվության 7,795.29 հազ. դրամի մարտ և փետրվար ամիսների կատարողականների գումարը չի ընդգրկվել ՀՀ ֆինանսների նախարարություն երկայացվող հաշվետվություն ձև 2-ում փաստացի ծախսի գումարի մեջ, ընդ որում նշված գումարի չափով էլ կավելանար կրեդիտորական պարտքերը: ՀՀ ֆինանսների նախարարության ,,Հայաստանի Հանրապետության 2021 թվականի առաջին եռամսյակի պետական բյուջեի ելքային ծրագրերի և միջոցառումների գծով արդյունքային (կատարողական) ցուցանիշների կատարման վերաբերյալ՝ ըստ միջոցառումները կատարող հանրային իշխանության մարմինների,, հաշվետվության հավելված 11.1-ի համաձայն շահառուների տարեկան ճշտված պլանը կազմել է 3277, սոցիալական հոգաժողության ցերեկային կենտրոնների թիվը՝ 6, 1-ին եռամսյակի համար համար պլանավորվել է 819.25, փաստացին կազմել է 1828 շահառու, սոցիալական հոգաժողության ցերեկային կենտրոնների փաստացի թիվը կազմել է 15: Վերը նշված արդյունքային

ցուցանիշներում 1-ին եռամսյակի համար պլանավորված 819.25 շահառուների թվաքանակը անհիմն է, քանի որ նշված 819.25 թիվը մեխանիկորեն տարեկան պլանի 1/4 մասն է, այնինչ նշված միջոցառումը նախատեսում է սպասարկել ամսական նույն շահառուների քանակ, ինչ որ նախատեսված է տարեկան պլանում, այսինքն եռամսյակային պլանը պետք է համընկնի տարեկան պլանին, եթե այլ հանգամանքեր չկան դրանք փոփոխելու:

Առկա է անհամապատասխանություն ՀՀ ֆինանսների նախարարության „Հայաստանի Հանրապետության 2021 թվականի առաջին եռամսյակի պետական բյուջեի ելքային ծրագրերի և միջոցառումների գծով արդյունքային (կատարողական) ցուցանիշների կատարման վերաբերյալ՝ ըստ միջոցառումները կատարող հանրային իշխանության մարմինների,, հաշվետվության հավելված 11.1-ում նշված առաջին եռամսյակի համար շահառուների թվաքանակի ճշտված պլանի մասով:

Առկա է դեպք, երբ ֆինանսական հաշվետվություններում ճշտված պլանի արժեքային ցուցանիշը արտացոլում է ոչ թե երեք ամիսների համար նախատեսված աշխատանքները, այլ երկու ամիսների՝ հունվար և փետրվար: Այսպես,

- 1117-11004 ծր. /Սոցիալական պաշտպանության ոլորտի տեղեկատվական համակարգի սպասարկման (կատարելագործման), շահագործման և տեղեկատվության տրամադրման ծառայություններ/- Միջոցառումն իրականացնող է հանդիսանում «Նորք սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամը: Տարեկան ճշտված պլանը կազմել է 315,005.91 հազ. դրամ, երեք ամիսների ճշտված պլանը՝ 53,709.2, համաձայն հաշվետվություն ձև-2-ի երեք ամիսների դրամարկղային ծախսը կազմել է 26,854,6 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 79,824.5 հազ. դրամ: Համաձայն հաշվետվություն ձև 4-ի կրեդիտորական պարտքը կազմել է 52.969.9 հազ. դրամ: Դրամարկղային ծախսի կատարողականը 1-ին եռամսյակի ճշտված պլանի նկատմամբ կազմել է 50.0%, իսկ փաստացի ծախսի ցուցանիշը հաշվի առնելով կատարողականը՝ համաձայն ներկայացված ցուցանիշների կկազմի 148.6 % /79,824.5 : 53,709.2*100/: Սակայն համաձայն 18.02.2021թ. նախարարության և հիմնադրամի միջև կնքված դրամաշնորհի

պայմանագրի հավելված 2-ով ներկայացված է վճարման ժամանակացույցը, համաձայն որի աճողական կարգով՝ հունվարին վճարում չի նախատեսվում, փետրվարին՝ 26,854.6 հազ. դրամ, մարտին՝ 53,709.2, ապրիլին՝ 79,824.5 հազ. դրամ: Նախարարություն կատարողականներ է ներկայացվել՝ հունվար ամսվա համար՝ 26,854.6 հազ. դրամ, փետրվար ամսվա համար՝ 26,854.6 հազ. դրամ, մարտ ամսվա համար՝ 26,115.3 հազ. դրամ: Հաշվի առնելով նշված ցուցանիշները կարելի է փաստել, որ ճշտված պլանը 1-ի եռամսյակի համար 53,709.2 հազ. դրամ թիվը ոչ թե երեք ամիսների համար նախատեսված աշխատանքների ծավալն է, այլ իրենից ներկայացնում է միայն հունվար և փետրվար ամիսներին կատարվելիք աշխատանքների ծավալը, որի համար վճարումները փետրվար և մարտ ամիսների համար համաձայն համապատասխան պայմանագրի պետք է կատարվեն փետրվար և մարտ ամիսներին: Իրական պլանը 1-ին եռամսյակում 53,709.3 հազ. դրամի փոխարեն պետք լիներ 79,824.5 հազ. դրամ:

Համաձայն 2021 թվականի առաջին եռամսյակի պետական բյուջեի ելքային ծրագրերի և միջոցառումների գծով արդյունքային /կատարողական/ ցուցանիշների կատարման վերաբերյալ հաշվետվության /հավելված N11.1/ սպասարկող բազաների տարեկան և եռամսյակային պլանային թիվ կազմել է 14 հատ, փաստացին կազմել է 14, սպասարկվող վեբկայքերի թիվ, սպասարկվող վեբկայքերի տարեկան և եռամսյակային պլանային թիվը կազմել է 6, փաստացին՝ 6, Սպասարկվող (այդ թվում նաև վերանորոգման կարիքի) համակարգչային տեխնիկայի տարեկան պլանային թիվը կազմել է 6699 հատ, եռամսյակային պլանային թիվը՝ 6700, փաստացին՝ 3287: Հիմնադրամն ունի տեխնիկայի սպասարկման մասնագետ, մշտական ներկայացուցիչ նախարարությունում, որը օպերատիվության, ժամանակի խնայողության և արագ արձագանքման ռեժիմով սպասարկում է Նախարարության կառուցվածքային ստորաբաժանումների տեխնիկան, շտկում խնդիրները՝ առանց գրավոր հայտերի լրացման, որը չեն ներառվում կատարողականներում:

Առկա է անհամապատասխանություն ֆինանսական հաշվետվություններում առաջին եռամսյակի արժեքային ցուցանիշի ճշտված պլանը առաջին եռամսյակի երեք ամիսներին նախատեսված աշխատանքները ամբողջապես ընդգրկելու մասով:

Միևնույն ժամանակ արձանագրվել են դեպքեր, երբ 2020 թվականի տարվա վերջի մնացորդը, որը հանդիսացել է 2021 թվականի տարեսկզբի դեբիտորական պարտք, հետ է վերադարձվել պետբյուջե սահմանված ժամկետից ուշ:

Այսպես, օրինակ

- 1153-11001 ծր. /Մեթոդաբանական ձեռնարկների մշակում, հետազոտությունների անցկացում և սոցիալական ապահովության ոլորտի կադրերի վերապատրաստում/-Համաձայն հաշվետվություն ձև-2-ի դրամարկղային ծախսը կազմել է 23,840,74 հազ. Դրամ, փաստացի ծախսը՝ 23,407.7 հազ. Դրամ: Համաձայն հաշվետվետվություն ձև 4-ի դեբիտորական պարտքը տարեսկզբին կազմել է 17,098.0 հազ. դրամ /01.02.2021թ.վերադարձվել է պետբյուջե/, հաշվետու ժամանակաշրջանի վերջին՝ 7,528.9 հազ. դրամ /համաձայն դրամաշնորհի պայմանագրի տրվել է կանխավճար/, կրեդիտորական պարտք տարեսկզբին՝ 0, հաշվետու ժամանակաշրջանի վերջում՝ 7,096.6 հազ. դրամ: Դրամարկղային ծախսի կատարողականը 1-ին եռամսյակի ճշտված պլանի նկատմամբ կազմել է 93.9%, իսկ փաստացի ծախսի ցուցանիշը հաշվի առնելով կատարողականը կկազմի $92.18 \% /23,407.7 : 25,393.4 * 100/$:

Հարկ է նշել, որ ՀՀ կառավարության 26.12.2019թ. թիվ 1919-Ն որոշման 4.3 կետի համաձայն 2020 թվականի պետական բյուջեից առանց մրցույթի դրամաշնորհի ձևով իրավաբանական անձանց տրամադրվող հատկացումների շրջանակում դրամաշնորհի պայմանագրով նախատեսված միջոցառումների տարեկան արդյունքները պետական մարմնի կողմից ընդունվելուց հետո իրավաբանական անձը միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումները (խնայողությունները) վերադարձնում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ ոչ ուշ, քան մինչև 2020 թվականի դեկտեմբերի 25-ը: Իսկ դրամաշնորհի պայմանագրի 4.6 կետով նախատեսված է որոշ հոդվածների գծով՝ պայմանավորված դեկտեմբեր ամսվա ցուցանիշներով, վերադարձնել պետբյուջե մինչև 2021թ. հունվարի 20-ը: Սակայն տարեսկզբի 17,098.0 հազ. դրամ դեբիտորական պարտքը պետբյուջե է վերադարձվել 01.02.2021թ.-ին՝ 10 օր ուշացումով:

Միևնույն ժամանակ համաձայն նախարարության տեղեկատվության 1,370.0 հազ. դրամի մարտ ամսվա կատարողականի գումար չի ընդգրկվել ՀՀ ֆինանսների նախարարություն երկայացվող

հաշվետվություն ձև 2-ում փաստացի ծախսի գումարի մեջ, ընդ որում նշված գումարի չափով էլ կավելանար կրեդիտորական պարտքերը:

ՀՀ ֆինանսների նախարարության „Հայաստանի Հանրապետության 2021 թվականի առաջին եռամսյակի պետական բյուջեի ելքային ծրագրերի և միջոցառումների գծով արդյունքային (կատարողական) ցուցանիշների կատարման վերաբերյալ՝ ըստ միջոցառումները կատարող հանրային իշխանության մարմինների,, հաշվետվության հավելված 11.1-ի համաձայն շահառուների հետազոտությունների մասով տարեկան ճշտված պլանով նախատեսվել է իրականացնել 9 հետազոտություն, հետազոտությունների արդյունքում ներկայացված առաջարկությունների թիվը՝ 95, վերապատրաստվող աշխատողների թիվը՝ 700, 1-ին եռամսյակում պլանավորվել է իրականացնել 9 հետազոտություն, առաջարկությունների թիվը՝ 95, վերապատրաստվող աշխատողների թիվը՝ 700, փաստացին՝ համապատասխանաբար 9, 95 և 0: Հարկ է նշել, որ <<Սոցիալական պաշտպանության ոլորտի կադրերի վերապատրաստման և որակավորման բարձրացման 2021 թ. ծրագիրն ու սեմինարների 2021թ. պլանը հաստատելու մասին>> նախարարի թիվ 59-Ա/1 հրամանը տրվել է 2021 թ. մայիսի 7-ին, որի պատճառով 1-ին եռամսյակում վերապատրաստումներ չեն իրականացվել, միևնույն ժամանակ վերապատրաստվող աշխատողների 1-ին եռամսյակում 700 թվի պլանավորումը սխալ է նշվել, հաշվի առնելով որ տարեկան պլանը նույնպես 700 է:

- 1153-11002 ծր. / Մասնագիտական կողմնորոշման, համակարգի մեթոդաբանության ապահովման և կադրերի վերապատրաստման ծառայություններ/-Սուպերվիզիան արդեն իսկ վերապատրաստված շահառուի խորհրդատվական ծառայությունների մատուցումն է: Ծրագրի թիրախում զբաղվածության պետական գործակալության /ԶՊԳ/ և տարածքային կենտրոնների, նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների /ԼՄԿՈՒՀ/, հանրական դպրոցների արդեն վերապատրաստված մասնագետներն են: Համաձայն 2021 թվականի առաջին եռամսյակի պետական բյուջեի ելքային ծրագրերի և միջոցառումների գծով արդյունքային /կատարողական/ ցուցանիշների կատարման վերաբերյալ հաշվետվության /հավելված N11.1/ մասնագիտական կողմնորոշման ուղղությամբ ուսուցում անցած մասնագետների տարեկան պլանային թիվը կազմել 140, առաջին եռամսյակում՝ 140, փաստացի՝ 24, սուպերվիզիայի ծառայություններ

ստացած մասնագետների տարեկան պլանային թիվը կազմել է 300, առաջին եռամսյակում՝ 300, փաստացին՝ 53, մշակված ուղեցույցների տարեկան պլանը կազմել է 2, առաջին եռամսյակում՝ 2, փաստացին՝ 2: Երեք ամիսների ճշտված պլանը կազմել է 6,032.6 հազ. դրամ, համաձայն հաշվետվություն ձև <- 2-ի դրամարկղային ծախսը կազմել է 5,941.7 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 5,868.0 հազ. դրամ, համաձայն հաշվետվություն ձև < 4-ի դեբիտորական պարտքը տարեսկզբին կազմել է 4,175.0 հազ. դրամ /01.02.2021թ.վերադարձվել է պետբյուջե/, հաշվետու ժամանակաշրջանի վերջում՝ 2,002.0 հազ. դրամ /համաձայն դրամաշնորհի պայմանագրի տրվել է կանխավճար/, կրեդիտորական պարտքը տարեսկզբին կազմել է 0, հաշվետու ժամանակաշրջանի վերջում՝ 1,928.3 հազ. դրամ: Հարկ է նշել, որ ՀՀ կառավարության 26.12.2019թ. թիվ 1919-Ն որոշման 4-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն 2020 թվականի պետական բյուջեից առանց մրցույթի դրամաշնորհի ձևով իրավաբանական անձանց տրամադրվող հատկացումների շրջանակում դրամաշնորհի պայմանագրով նախատեսված միջոցառումների տարեկան արդյունքները պետական մարմնի կողմից ընդունվելուց հետո իրավաբանական անձը միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումները (խնայողությունները) վերադարձնում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ ոչ ուշ, քան մինչև 2020 թվականի դեկտեմբերի 25-ը: Իսկ դրամաշնորհի պայմանագրի 4.6 կետով նախատեսված է որոշ հոդվածների գծով՝ պայմանավորված դեկտեմբեր ամսվա ցուցանիշներով, վերադարձնել պետբյուջե մինչև 2021թ. հունվարի 20-ը, մինչդեռ տարեսկզբի 4,175.0 հազ. դրամի դեբիտորական պարտքը վերադարձվել է պետբյուջե 01.02.2021թ.-ին՝ 10 օր ուշացումով:

Առկա է անհամապատասխանություն առաջացած տնտեսումները/խնայողությունները/ նախարարության և կազմակերպությունների միջև կնքված դրամաշնորհի պայմանագրերի 4.6 կետով նախատեսված ժամկետներում պետբյուջե վերադարձնելու ժամկետների մասով:

Հաշվեքննության օբյեկտի ներկայացրած պարզաբանումները և դրանց վերաբերյալ հաշվեքննողների արձագանքը

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 19.07.2021թ. ՆՄ/29867-2021 գրությամբ ներկայացվել է պարզաբանում ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2021 թվականի պետական բյուջեի երեք ամիսների մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեության վերաբերյալ>>:

Թիվ 1. Հաշվեքննության օբյեկտի պարզաբանումները - Որոշ միջոցառումների մասով հաշվետու ժամանակաշրջանի տարբեր ամիսների կատարողականների գումարները ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացվող ձև-2 հաշվետվությունում չընդգրկելու վերաբերյալ

- ՀՀ ֆինանսների նախարարություն հաջորդիվ ներկայացվող հաշվետվություններում իրական կրեդիտորական պարտքերը, իրական փաստացի ծախսերը հնարավորինս ճշգրիտ ներկայացնելու ուղղությամբ՝ ՀՀ ԱՍՀՆ գլխավոր քարտուղարի 21.09.2020 թվականի Ն/ԳՄ/26703-2020 հանձնարարականով բոլոր պատասխանատու կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներին տրվել է հանձնարարական, որպեսզի կատարողականները ֆինանսավորման ներկայացվեն մինչև տվյալ ամսվան հաջորդող ամսվա 10-ը, որն էլ հաշվապահական հաշվառման բաժին հնարավորություն կտա հաշվետվություններում ներառել տվյալ եռամսյակի իրական փաստացի ծախսերը և իրական կրեդիտորական ծախսերը, սակայն հաշվեքննության արձանագրության մեջ նշված նշված մասնավորապես՝ 1141-12002 ծրագրի /Կենսաբանական ընտանիք տեղափոխված և հաստատության մուտքը կանխարգելված երեխաների ընտանիքների բնաիրային օգնության փաթեթի տրամադրում/ չներառված 2,628.64 հազ. դրամ /փետրվար, մարտ ամիսների կատարողական ակտեր/ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ֆինանսական և հաշվապահական հաշվառման վարչության հաշվապահական հաշվառման բաժին է ուղարկվել 2021թ. ապրիլի 23-ին, 27-ին, 29-ին, 30-ին, 1141-11018 ծրագրի /Երեխաների խնամքի ցերեկային ծառայությունների տրամադրում/ 7,795.29 հազ. դրամը՝ /փետրվար, մարտ ամիսների կատարողական ակտեր/ 2021թ. ապրիլի 23-ին, 25-ին, 28-ին: 1153-11001 ծրագրի /Մեթոդաբանական ձեռնարկների մշակում, հետազոտությունների անցկացում և սոցիալական ապահովության ոլորտի կադրերի վերապատրաստում/ 1,370.0 հազ. դրամը՝ /մարտ ամսվա կատարողական ակտ/ 2021թ. ապրիլի 29-ին: 1141-11002 ծրագրի /ՀՀ երեխաների շուրջօրյա խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում խմանվող և հաստատությունում հայտնվելու ռիսկի

խմբում գտնվող երեխաների ընտանիք վերադարձնելու և մուտքը հաստատություններ կանխարգելելու ծառայություններ/ 1,459.18 հազ. դրամը՝ /փետրվար, մարտ ամիսների կատարողական ակտեր/ 2021թ. ապրիլի 22-ին և ապրիլի 23-ին: Նշված կատարողականները ուշ ներկայացնելու հանգամանքով

պայմանավորված չեն ներառվել 2021թ. առաջին եռամսյակի հաշվետվությունների փաստացի ծախսերում, քանի որ ՀՀ ԱՍՀ նախարարության 2021թ. առաջին եռամսյակի հաշվետվությունները ներկայացնելու վերջնաժամկետը՝ սույն թվականի ապրիլի 20-ն է: Միաժամանակ տեղեկացնում են, որ 1141-11016 ծրագրի /Ընտանեկան բռնության ենթարկված անձանց աջակցության կենտրոնների ծառայություններ/ 471.54 հազ. դրամը ապրիլ ամսվա կատարողական ակտի գումարն է և չի կարող ներառվել 2021թ. առաջին եռամսյակի հաշվետվություններում:

Հաշվեքննողների արձագանքը թիվ 1-ի վերաբերյալ- Արձանագրված փաստն վերաբերվում է առաջին եռամսյակի որոշ ամիսների կատարված աշխատանքների գումարներին, որի վերաբերյալ առկա են հայտպահանջագրեր/ կատարողականներ/ և դրանք չեն ընդգրկվել նախարարության կողմից ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացվող ձև-2 հաշվետվությունում: Այսինքն ձև-2 հաշվետվություններում նշված փաստացի ծախսերի ցուցանիշը լիարժեք չի արտացոլել հաշվետու ժամանակաշրջանում փաստացի կատարված աշխատանքների ծավալները: Նախարարության ներկայացրած պարզաբանումը վերաբերվում է այն պատճառներին, /մասնավորապես կատարողականները նախարարության հաշվապահական հաշվառման բաժին ուշ ներկայացնելու հանգամանքը/ որի պարագայում առաջացել է նշված անհամապատասխանությունները: Տվյալ պարագայում անհրաժեշտ է ձեռնարկել համապատասխան միջոցներ արձանագրված անհամապատասխանությունների առաջացման պատճառները վերացնելու ուղղությամբ: Իսկ ինչ վերաբերվում է 1141-11016 ծրագրի /Ընտանեկան բռնության ենթարկված անձանց աջակցության կենտրոնների ծառայություններ/ 471.54 հազ. դրամի կատարողականի գումարը, որպես 2021թ. առաջին եռամսյակի հաշվետվություններում չներառված գումար արձանագրելուն, ապա նշենք, որ այն նշվել էր հիմք ընդունելով նախարարության համապատասխան ստորաբաժանման տեղեկատվությունը: Կատարվել է համապատասխան ճշգրտում:

Թիվ 2. Հաշվեքննության օբյեկտի պարզաբանումները- 1160-12001 ծրագրի /Պետական հավաստագրերով աջակցող միջոցների տրամադրում/ գերակատարման վերաբերյալ

- 1160-12001 ծրագրի գերակատարումը պայմանավորված է հաշվետու ժամանակահատվածում շահառուների մեծ դիմելիությամբ, ինչն էլ իր հերթին պայմանավորված է 2020 թվականի սեպտեմբերի 27-ից Արցախի Հանրապետության դեմ սանձազերծված պատերազմով:

Հաշվեքննողների արձագանքը թիվ 2-ի վերաբերյալ ընդունվել է ի գիտություն, սակայն մի շարք սոցիալական ծրագրերի հաշվարկային թվերում նախատեսված շահառուների քանակները անհրաժեշտ է համապատասխանեցնել 2020 թվականի սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի Հանրապետության կողմից Արցախի Հանրապետության դեմ սանձազերծված պատերազմի հետևանքով շահառու դասված անձանց իրական քանակներին:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության երեք ամիսների ելքային ծրագրերի և միջոցառումների գծով ծախսերի ցուցանիշները և դրանց յուրաքանչյուրի մասով կատարողականների վերաբերյալ ամբողջական տվյալները և անհամապատասխանությունների վերաբերյալ նկատառումները ներկայացված է կից ներկայացվող թիվ 1 հավելվածով:

6. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՄԲ ԱՐՁԱԳՐՎԱԾ ԱՅԼ ՓԱՍՏԵՐ

Վերլուծելով փաստացի ծախսերի և հաշվետու ժամանակաշրջանի ճշտված պլանի ցուցանիշների հարաբերակցությունը պարզվեց, որ մի շարք ծրագրային միջոցառումների դեպքերում առկա է նաև գերակատարումներ: Ընդ որում կատարողականների ցուցանիշները որպես կանոն հաշվարկվում են հիմք ընդունելով դրամարկղային ծախսի ցուցանիշը: Սակայն եթե հաշվի առնենք փաստացի ծախսի ցուցանիշը, որը իրենից ներկայացնում է հաշվետու ժամանակաշրջանում փաստացի կատարված աշխատանքները, ապա փաստացի ծախսի և ճշտված պլանի ցուցանիշների հարաբերակցությունը կարտահայտի հաշվետու ժամանակաշրջանում կատարված աշխատանքների փաստացի կատարողականը: Մասնավորապես թվով 6 ծրագրային միջոցառումների դեպքում առկա է ճշտված պլանի նկատմամբ հաշվետու ժամանակաշրջանում իրականացված փաստացի ծախսերի գերակատարում: Այսպես օրինակ.

1. 1011-11002 ծր./ Համայնքային ենթակայության սոցիալական ծառայությունների կողմից սոցիալական աջակցության քաղաքականության

- իրականացման ապահովում/ճշտված պլանը կազմել է 100,852.4 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 169,355.8 հազ. դրամ, կատարողականը կկազմի 167.9 %:
2. 1015-12001 ծր./ Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների սոցիալական փաթեթով ապահովում/ճշտված պլանը կազմել է 29,460.0 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 35,901.32 հազ. դրամ, կատարողականը կկազմի 121.9 %:
 3. 1088-12013 ծր./ Աշխատաշուկայում անմրցունակ անձանց անասնապահությամբ զբաղվելու համար աջակցության տրամադրում/ճշտված պլանը կազմել է 40,000.0 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 54,255.8 հազ. դրամ, կատարողականը կկազմի 135.6 %:
 4. 1117-11001 ծր./ Սոցիալական պաշտպանության բնագավառի պետական քաղաքականության մշակման, ծրագրերի համակարգման և մոնիթորինգի ծառայություններ/ճշտված պլանը կազմել է 523,634.3 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 615,516.4 հազ. դրամ, կատարողականը կկազմի 117.5 %:
 5. 1032-11005 ծր./ Անօթևան մարդկանց համար ժամանակավոր օթևանի տրամադրման ծառայություններ/ճշտված պլանը կազմել է 12,131.9 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 13,753.2 հազ. դրամ, կատարողականը կկազմի 113.36 %:
 6. 1160-12001 ծր./ Պետական հավաստագրերով աջակցող միջոցների տրամադրում/ճշտված պլանը կազմել է 221,678.2 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 287,893.9 հազ. դրամ, կատարողականը կկազմի 129.87 %:

Թվով 12 ծրագրային միջոցառումների դեպքում՝ ընդհանուր 254,693.0 հազ. դրամ ճշտված պլանով երեք ամիսների համար առկա է պլանավորում, սակայն դրամարկղային ծախսի կատարողականը 0% է եղել: Մասնավորապես,

1. 1011-11002 ծր. /Համայնքային ենթակայության սոցիալական ծառայությունների կողմից սոցիալական աջակցության քաղաքականության իրականացման ապահովում/ճշտված պլանը կազմել է 100,852.4 հազ. դրամ, կատարողականը՝ 0 %:
2. 1011-11005 ծր. / Սոցիալական շտապ օգնություն/ճշտված պլանը կազմել է 928.0 հազ. դրամ, կատարողականը՝ 0 %:
3. 1088-11004 ծր. / Աշխատաշուկայում անմրցունակ անձանց փոքր ձեռնարկատիրական գործունեության աջակցության տրամադրում ծրագրի ուսուցման կազմակերպման և խորհրդատվական ծառայություններ/ճշտված պլանը կազմել է 1,000.0 հազ. դրամ, կատարողականը՝ 0 %:

4. 1032-11011 ծր. / Տնային խնամքի ծառայություններ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց համար/՝ ճշտված պլանը կազմել է 2,412.9 հազ. դրամ, կատարողականը՝ 0 %:
5. 1088-11001 ծր. / Գործազուրկների, աշխատանքից ազատման դիսկ ունեցող, ինչպես նաև ազատազրկման ձևով պատիժը կրելու ավարտին վեց ամիս մնացած աշխատանք փնտրող անձանց մասնագիտական ուսուցման կազմակերպում/՝ ճշտված պլանը կազմել է 9,873.5 հազ. դրամ, կատարողականը՝ 0 %:
6. 1088-12008 ծր. / Գործազուրկների, աշխատանքից ազատման դիսկ ունեցող, ինչպես նաև ազատազրկման ձևով պատիժը կրելու ավարտին վեց ամիս մնացած աշխատանք փնտրող անձանց կրթաթոշակի տրամադրում/՝ ճշտված պլանը կազմել է 3,000.5 հազ. դրամ, կատարողականը՝ 0 %:
7. 1141-12006 ծր. /Ընտանիքում բռնության ենթարկվածների ժամանակավոր աջակցություն/՝ ճշտված պլանը կազմել է 2,500.0 հազ. դրամ, կատարողականը՝ 0 %:
8. 1141-12007 ծր. /Բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունների շրջանավարտների համար բնակարանների վարձակալություն/՝ ճշտված պլանը կազմել է 360.0 հազ. դրամ, կատարողականը՝ 0 %:
9. 1032-12001 ծր. /Սոցիալական բնակարանային ֆոնդի կացարաններում բնակվող միայնակ կենսաթոշակառուներին կոմունալ ծախսերի դիմաց դրամական փոխհատուցում/՝ ճշտված պլանը կազմել է 3,600.0 հազ. դրամ, կատարողականը՝ 0 %:
10. 1160-11001 ծր. /Հաշմանդամություն ունեցող անձանց աջակցող միջոցների վերանորոգում/՝ ճշտված պլանը կազմել է 1,611.9 հազ. դրամ, կատարողականը՝ 0 %:
11. 1206-32002 ծր. / ՀԲ աջակցությամբ իրականացվող Սոցիալական պաշտպանության վարչարարության երկրորդ ծրագրի շրջանակներում սարքավորումների, ծրագրային ապահովման և աշխատանքային միջավայրի արդիականացում/՝ ճշտված պլանը կազմել է 122,243.2 հազ. դրամ, կատարողականը՝ 0 %:
12. 1160-11011 ծր. / Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց շուրջօրյա խնամքի ծառայություններ/՝ ճշտված պլանը կազմել է 6,310.6 հազ. դրամ, կատարողականը՝ 0 %:

Մի շարք դեպքերում կատարողականների ցածր մակարդակը պայմանավորված է դրամաշնորհի մրցույթները ուշ հայտարարելու մեջ.

ընդ որում ներքոհիշյալ դրամաշնորհի մրցույթները, ինչպես նաև այդ մրցույթների արդյունքում կնքված պայմանագրերի հիման վրա մատուցվելիք ծառայությունները կարող էին ժամանակին կատարվել, եթե նախարարության կողմից մրցույթները հայտարարվեին Գնումների մասին ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համապատասխան, այն է՝ մինչև ֆինանսական միջոցներ նախատեսվելը նախարարությունը կարող էր կնքել պայմանագրեր՝ պայմանով, այն դեպքում, երբ նախորդ տարի նմանատիպ պայմանագրերը՝ կնքվել էին պայմանով: Մասնավորապես.

1. 1032-11002 ծր.- /Տարեցներին և հաշմանդամություն ունեցող անձանց տնային պայմաններում խնամքի ծառայություններ/-2021թ. հաշվետու ժամանակահատվածի համար պլանավորվել է 42,764,3 հազ.դրամ: Համաձայն հաշվետվություն ձև Հ-2 -ի դրամարկղային ծախսը կազմել 14,970.78 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 31,714,72 հազ. դրամ: Համաձայն դեբիտորական և կրեդիտորական պարտքերի հաշվետվություն ձև Հ-4-ի կրեդիտորական պարտքը կազմել է 16,743,94 հազ. դրամ: Հաշվետու ժամանակահատվածի համար Շահառուների ընդհանուր ամսական պլանը, համաձայն արդյունքային ցուցանիշների՝ կազմել է 2180

2021թ. 1-ին եռամսյակ. փաստացի միջին թիվը կազմել է 2165, որից

հունվար-148, փետրվար - 2208, մարտ - 2117: Ծրագիրը հունվար ամսից իրականացրել է՝ «Տնային պայմաններում միայնակ տարեցների և հաշմանդամների սոցիալական սպասարկման կենտրոն» ՊՈԱԿ-ը, իսկ փետրվար ամսից թվով 2 Հ/Կ -ներ: 2021թ. ծառայությունների մատուցման համար Դրամաշնորհի մրցույթը հայտարարվել է դեկտեմբեր ամսին և մրցույթի արդյունքում հաղթող է ճանաչվել՝ «Առաքելություն Հայաստան» ԲՀԿ-ն և «Հայկական Կարիտաս» ԲՀԿ-ն: Տարբերությունը պայմանավորված է դիմողների թվի պակաս լինելու, ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 25-ի N 1112-Ն որոշմամբ սահմանված չափորոշիչներին չհամապատասխանելու, ինչպես նաև դրամաշնորհի մրցույթը դեկտեմբերի 18-ին հայտարարելու, հունվարի 18-ին անցկացնելու, իսկ ծառայությունների մատուցումը փետրվար ամսից իրականացնելու հետ: Պայմանագրերը կնքվել են 2021թ. փետրվարի 22-ին և 23-ին, պայմանագրի գործողությունը տարածվում է կողմերի միջև 2021 թվականի փետրվարի 1-ից ծագած հարաբերությունների վրա: Հունվար ամսին նախարարության կողմից ֆինանսավորում իրականացվել է միայն ՊՈԱԿ-ին, իսկ վերոնշյալ Հ/Կ-ները հունվար ամսին ծառայություն չեն մատուցել: Հարկ է նշել, որ վերոնշյալ դրամաշնորհի մրցույթները, ինչպես նաև այդ մրցույթների արդյունքում կնքված պայմանագրերի հիման վրա մատուցվելիք

ծառայությունները կարող էին ժամանակին կատարվել, եթե նախարարության կողմից մրցույթները հայտարարվեին Գնումների մասին ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի համապատասխան, այն է՝ մինչև ֆինանսական միջոցներ նախատեսվելը նախարարությունը կարող էր կնքել պայմանագրեր՝ պայմանով, այն դեպքում, երբ նախորդ տարի նմանատիպ պայմանագրերը կնքվել էին պայմանով:

Դրամարկղային ծախսի կատարման %-ը 1-ին եռամսյակի ճշտված պլանի նկատմամբ կազմել է 51.6%, իսկ հաշվի առնելով ձև 2 հաշվետվության փաստացի ծախսի գումարը առաջին եռամսյակում՝ ճշտված պլանի նկատմամբ կատարողականը կկազմի 81,72%:

2. 1032-11003 ծր.- / Տարեցներին, հաշմանդամություն ունեցող անձանց ցերեկային խնամքի ծառայություններ (սննդի տրամադրման գծով)/- 2021թ. հաշվետու ժամանակահատվածի համար պլանավորվել է 40,733.6 հազ. դրամ: Համաձայն հաշվետվություն ձև Հ-2 -ի դրամարկղային ծախսը կազմել է 14,970.78 հազ. դրամ, փաստացի ծախսը կազմել է 31,714.72 հազ. դրամ: Համաձայն դեբիտորական և կրեդիտորական պարտքերի հաշվետվություն ձև Հ-4-ի կրեդիտորական պարտքը կազմել է 16,743.94 հազ. դրամ: Շահառուների ընդհանուր թիվը՝ 2021 թ.- Պլան՝ 1845:

2021թ. 1-ին եռամսյակի փաստացի միջին թիվը կազմել է՝ 1535, որից

հունվար-0, փետրվար - 1771, մարտ - 1299: Տարբերությունը պայմանավորված է դիմողների թվի պակաս լինելու, ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 25-ի N 1112-Ն որոշմամբ սահմանված չափորոշիչներին չհամապատասխանելու, ինչպես նաև դրամաշնորհի մրցույթը դեկտեմբերի 16-ին հայտարարելու, հունվարի 16-ին անցկացնելու հետ:

Պայմանագրերը կնքվել են «Առաքելություն Հայաստան» ԲՀԿ - ի հետ 2021թ. փետրվարի 23-ին, պայմանագրի գործողությունը տարածվում է կողմերի միջև 2021 թվականի փետրվարի 1-ից ծագած հարաբերությունների վրա: Հունվար ամսին նշված ԲՀԿ-ն ծառայություն չի իրականացրել, կապված մրցույթի ուշ իրականացման հետ: Հարկ է նշել, որ վերոնշյալ դրամաշնորհի մրցույթները, ինչպես նաև այդ մրցույթների արդյունքում կնքված պայմանագրերի հիման վրա մատուցվելիք ծառայությունները կարող էին ժամանակին կատարվել, եթե նախարարության կողմից մրցույթները հայտարարվեին Գնումների մասին ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի համապատասխան, այն է՝ մինչև ֆինանսական միջոցներ նախատեսվելը նախարարությունը կարող էր կնքել պայմանագրեր՝ պայմանով, այն դեպքում, երբ նախորդ տարի նմանատիպ պայմանագրերը կնքվել էին պայմանով: Դրամարկղային

ծախսի կատարման %-ը 1-ին եռամսյակի ճշտված պլանի նկատմամբ կազմել է 36.8%, իսկ հաշվի առնելով ձև 2 հաշվետվության փաստացի ծախսի գումարը առաջին եռամսյակում՝ ճշտված պլանի նկատմամբ կատարողականը կկազմի 77,85%:

3. 1032-11004 ծր.- /Տարեցների և հաշմանդամություն ունեցող 18 տարին լրացած անձանց շուրջօրյա խնամքի ծառայություններ Լոռու մարզում/-2021թ.հաշվետու ժամանակահատվածի համար պլանավորվել է 5,011.3. հազ. դրամ: Համաձայն հաշվետվություն ձև Հ-2 -ի դրամարկղային ծախսը կազմել է 2,296,8 հազ. դրամ, փաստացի ծախսը կազմել է 4,593,7 հազ. դրամ, համաձայն դեբիտորական և կրեդիտորական պարտքերի հաշվետվություն ձև Հ-4-ի կրեդիտորական պարտքը կազմել է 2,296.9 հազ. դրամ: Շահառուների ընդհանուր թիվը՝ 2021 թ. – Պլան՝ 55

2021թվականի 1-ին եռամսյակի փաստացի միջին թիվը՝ 42:

Թերակատարման պատճառը հանդիսանում է ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 25-ի N 1112-Ն որոշմամբ սահմանված չափորոշիչներին համապատասխան շահառուներ չունենալու հետ, ինչպես նաև դրամաշնորհի մրցույթը դեկտեմբերի 16-ին հայտարարելու, հունվարի 16-ին անցկացնելու, իսկ ծառայությունների մատուցումը փետրվար ամսից իրականացնելու հետ: Պայմանագիրը կնքվել է 19.02.2021թ.-ին: Հարկ է նշել, որ վերոնշյալ դրամաշնորհի մրցույթները, ինչպես նաև այդ մրցույթների արդյունքում կնքված պայմանագրերի հիման վրա մատուցվելիք ծառայությունները կարող էին ժամանակին կատարվել, եթե նախարարության կողմից մրցույթները հայտարարվեին Գնումների մասին ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի համապատասխան, այն է՝ մինչև ֆինանսական միջոցներ նախատեսվելը նախարարությունը կարող էր կնքել պայմանագրեր՝ պայմանով, այն դեպքում, երբ նախորդ տարի նմանատիպ պայմանագրերը կնքվել էին պայմանով: Դրամարկղային ծախսի կատարման %-ը 1-ին եռամսյակի ճշտված պլանի նկատմամբ կազմել է 45.8%, Հաշվի առնելով ձև 2 հաշվետվության փաստացի ծախսի գումարը առաջին եռամսյակում՝ ճշտված պլանի նկատմամբ կատարողականը կկազմի 91,6%:

4. 1060-11007 ծր.- / Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալ-հոգեբանական աջակցություն ցերեկային կենտրոնում/-2021թ.-ի հաշվետու ժամանակահատվածի համար պլանավորվել է 4,825.7հազ. դրամ: Համաձայն հաշվետվություն ձև Հ-2 -ի դրամարկղային ծախսը կազմել է 1,070.6 հազ. դրամ, փաստացի ծախսը կազմել է 3,366,75 հազ. դրամ: համաձայն դեբիտորական և կրեդիտորական պարտքերի

հաշվետվություն ձև Հ-4-ի կրեդիտորական պարտքը կազմել է 2,296.15 հազ. դրամ: Հաշվետու ժամանակահատվածի համար, համաձայն արդյունքային ցուցանիշների՝ ամսական նախատեսվել է ծառայություն մատուցել թվով 120 շահառուի, փաստացին կազմել է 112: Ծրագրի իրականացման նպատակով կնքվել են հետևյալ պայմանագրերը՝

- «Լիարժեք կյանք» /լու1/ - 16.02.2021թ. - ամսական 30 շահառու
- «Լիարժեք կյանք» /լու2/ - 16.02.2021 թ.- ամսական 60 շահառու
- «Մանկական զարգացման հիմնադրամ» /լու3/ - 16.02.2021թ. - ամսական՝ 30 շահառու:

Թերակատարման պատճառը հանդիսանում է դրամաշնորհի մրցույթը դեկտեմբերի 16-ին հայտարարելու, հունվարի 16-ին անցկացնելու, իսկ ծառայությունների մատուցումը փետրվար ամսից իրականացնելու հետ: Պայմանագիր կնքվել է 16.02.2021թ.-ին: Հունվար ամսին նշված միջոցառման մասով ծառայություն չի իրականացվել: Հարկ է նշել, որ վերոնշյալ դրամաշնորհի մրցույթները, ինչպես նաև այդ մրցույթների արդյունքում կնքված պայմանագրերի հիման վրա մատուցվելիք ծառայությունները կարող էին ժամանակին կատարվել, եթե նախարարության կողմից մրցույթները հայտարարվեին Գնումների մասին ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի համապատասխան, այն է՝ մինչև ֆինանսական միջոցներ նախատեսվելը նախարարությունը կարող էր կնքել պայմանագրեր՝ պայմանով, այն դեպքում, երբ նախորդ տարի նմանատիպ պայմանագրերը կնքվել էին պայմանով: Դրամարկղային ծախսի կատարման %-ը 1-ին եռամսյակի ճշտված պլանի նկատմամբ կազմել է 22.2%, իսկ հաշվի առնելով ձև 2 հաշվետվության փաստացի ծախսի գումարը առաջին եռամսյակում՝ ճշտված պլանի նկատմամբ կատարողականը կկազմի 69,76%:

5. 1060-11009 ծր.- /Տեսողության խնդիրներ ունեցող անձանց սոցիալ-հոգեբանական վերականգնում/- Հաշվետու ժամանակահատվածի ճշտված պլանը կազմել է 1,236.2 հազ. դրամ, Համաձայն հաշվետվություն ձև Հ-2 -ի դրամարկղային ծախսը կազմել է 352,05 հազ. դրամ, փաստացի ծախսը կազմել է 1,276.89 հազ. դրամ, համաձայն դեբիտորական և կրեդիտորական պարտքերի հաշվետվություն ձև Հ-4-ի կրեդիտորական պարտքը կազմել է 934,04 հազ. դրամ: Հաշվետու ժամանակահատվածի համար, համաձայն արդյունքային ցուցանիշների՝ ամսական նախատեսվել է ծառայություն մատուցել թվով 30 շահառու, իսկ փաստացի սպասարկվել է թվով 19

շահառուներ: Ծրագրի իրականացման նպատակով 16.02.2021 թ.-ին կնքվել է պայմանագիր՝

«Լիարժեք կյանք» Հ/Կ-ի հետ (ամսական 30 շահառու): Թերակատարման պատճառը հանդիսանում է դրամաշնորհի մրցույթը դեկտեմբերի 16.-ին հայտարարելու, հունվարի 16-ին անցկացնելու, իսկ ծառայությունների մատուցումը փետրվար ամսից իրականացնելու հետ: Պայմանագիր կնքվել է 16.02.2021թ.-ին:

Հունվար ամսին նշված միջոցառման մասով ծառայություն չի իրականացվել: Հարկ է նշել, որ վերոնշյալ դրամաշնորհի մրցույթները, ինչպես նաև այդ մրցույթների արդյունքում կնքված պայմանագրերի հիման վրա մատուցվելիք ծառայությունները կարող էին ժամանակին կատարվել, եթե նախարարության կողմից մրցույթները հայտարարվեին Գնումների մասին ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի համապատասխան, այն է՝ մինչև ֆինանսական միջոցներ նախատեսվելը նախարարությունը կարող էր կնքել պայմանագրեր՝ պայմանով, այն դեպքում, երբ նախորդ տարի նմանատիպ պայմանագրերը կնքվել էին պայմանով: Դրամարկղային ծախսի կատարման %-ը 1-ին եռամսյակի ճշտված պլանի նկատմամբ կազմել է 27.7%, Հաշվի առնելով ձև 2 հաշվետվության փաստացի ծախսի գումարը առաջին եռամսյակում՝ ճշտված պլանի նկատմամբ կատարողականը կկազմի 103,2%:

Թիվ 3. Հաշվեքննության օբյեկտի պարզաբանումները- 1160-11001 ծրագրի /Հաշմանդամություն ունեցող անձանց աջակցող միջոցների վերանորոգում/ կատարողականը 0% լինելու վերաբերյալ

- 1160-11001 ծրագրի կատարողականի 0%-ը պայմանավորված է աջակցող միջոցների վերանորոգման ծառայության վերաբերյալ պայմանագիր չկնքելու հանգամանքով, քանի որ «Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 1035-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի սեպտեմբերի 7-ի N 1151-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» որոշման նախագծով նախատեսվում է ներդնել վերանորոգման նոր մեխանիզմ՝ վերանորոգումն իրականացնել որակավորված կազմակերպությունների միջոցով: Ներկայումս վերանորոգումը կատարվում է մրցույթի արդյունքում հաղթած մեկ կազմակերպության կողմից, որն առաջացնում է խնդիրներ այլ կազմակերպությունից ստացած աջակցող միջոցի վերանորոգումն իրականացնելիս: Նախատեսվող փոփոխությունը հնարավորություն է տալիս շահառուին աջակցող

միջոցի վերանորոգումն իրականացնել այն կազմակերպությունում, որտեղից ստացել է աջակցող միջոցը: Որոշման ընդունումից հետո կկազմակերպվի վերանորոգման գործընթացը նոր մեխանիզմներով, որն ավելի արդյունավետ կդարձնի վերանորոգման ծառայությունը: 1160-11011 ծրագրի կատարողականի 0% պայմանավորված է ծրագրի շրջանակներում 1-ին եռամսյակի ընթացքում հայտարարված մրցույթների արդյունքում որևէ կազմակերպության հաղթող չճանաչվելու հանգամանքով: Ինչ վերաբերում է ծրագրերի դրամաշնորհի մրցույթները վաղ հայտարարելու և անցկացնելու, պայմանագրերը ավելի վաղ կնքելու դիտարկմանը, ապա դրանց ուշացման հիմնական պատճառը սեպտեմբերի 27-ից Արցախի Հանրապետության դեմ սանձազերծված պատերազմն էր, և նախարարությունը դիմակայում էր այլ մարտահրավերների:

Հաշվեքննողների արձագանքը թիվ 3-ի վերաբերյալ- Հաշվեքննության օբյեկտի կողմից ներկայացվել է նշված ծրագրի մասով կատարողականը 0% լինելու պատճառները:

Թիվ 4. Հաշվեքննության օբյեկտի պարզաբանումները- 1032-12001 ծրագրի /Սոցիալական բնակարանային ֆոնդի կացարաններում բնակվող միայնակ կենսաթոշակառուներին կոմունալ ծախսերի դիմաց դրամական փոխհատուցում / կատարողականը 0% լինելու վերաբերյալ

-1032-12001 մ միջոցառման հետ կապված ի հավելումն տեղեկացնում ենք նաև, որ այս պահի դրությամբ ստացել ենք գերատեսչությունների կարծիքները, ամփոփել և ՄՆ/ԲՀ-5-1/29326-2021 գրությամբ ուղարկել ՀՀ արդարադատության նախարարություն:

Հաշվեքննողների արձագանքը թիվ 4-ի վերաբերյալ-Մեր կողմից նշվել էր, որ խնդրի լուծման նպատակով նախարարությունը պատրաստել էր «Հայաստանի Հանրապետությունում սոցիալական բնակարանային ֆոնդի կացարաններում բնակվող միայնակ կենսաթոշակառուների սպառած բնական գազի, էլեկտրական էներգիայի և ջրամատակարարման վարձավճարների փոխհատուցման կարգը, ինչպես նաև 2022 թվականին փոխհատուցման ենթակա ծախսերի ծավալները սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հուլիսի 30-ի N 1278-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որը 07.06.2021թ. կարծիքի էր ուղարկվել ինչպես շահագրգիռ գերատեսչություններ, այնպես էլ ծառայություններ մատուցող Ընկերություններ: Ստացված պարզաբանմամբ նախարարությունը տեղեկացնում է, որ նշված որոշման նախագծի վերաբերյալ արդեն իսկ ստացվել են գերատեսչությունների կարծիքները և այն ուղարկվել է ՀՀ արդարադատության նախարարություն:

Թիվ 5. Հաշվեքննության օբյեկտի պարզաբանումները- 1032-11011 ծրագրի /Տնային խնամքի ծառայություններ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց համար/ կատարողականը 0% լինելու վերաբերյալ

- Տեղեկացնում ենք, որ տեղեկությունը մասամբ սխալ է: 2021 թվականի հունվարի 15-ին մրցույթը, որն ուներ միայն մեկ լոտ՝ Երևան, չի կայացել, քանի որ հայտ ներկայացնող կազմակերպությունը ուշացել էր, իսկ ապրիլի 1-ից կնքվել է պայմանագիր՝ նույն կազմակերպության հետ, հենց այդ մեկ լոտի՝ Երևանի համար, մարզում ծառայություններ չկան և չեն էլ մատուցվել: Ըստ այդմ, առաջին եռամսյակում ծառայություն չի մատուցվել, իսկ ապրիլի 1-ից սկսած մատուցվում է:

Հաշվեքննողների արձագանքը թիվ 5-ի վերաբերյալ- Արձանագրության 2-րդ հավելվածի 8-րդ կետում մեր կողմից նշված տեղեկատվության համար հիմք է հանդիսացել նախարարության գնումների համակարգման բաժնից ստացված տեղեկատվությունը՝ այն է <<Դրամաշնորհային մրցույթը հայտարարվել են 2020 թվականի դեկտեմբերի 16-ին և իրականացվել են 2021 թվականի հունվարի 15-ին: Լոտ 1- Երևան մրցույթը չի կայացել, քանի որ ոչ մի հայտ չի ներկայացվել:

Լոտ 2- Մարզ մրցույթը առաջին փուլով չի կայացել, քանի որ կազմակերպության կողմից հայտը ներկայացվել է ուշացումով, ինչը չի ընդունվել հանձնաժողովի կողմից:

Երկրորդ փուլով դրամաշնորհի մրցույթը հայտարարվել է փետրվարի 5-ին և բացվել է մարտի 9-ին: Լոտ 1- Երևան մրցույթը չի կայացել, քանի որ ոչ մի հայտ չի ներկայացվել: Լոտ 2- Մարզ՝ մրցույթին դիմել է միայն «Խնամք» Հ/Կ-ն: Մրցույթի արդյունքում հաղթող է ճանաչվել նույն կազմակերպությունը, որը ծառայություններ է մատուցում 01.04.2021 թվականից Սպիտակ քաղաքում (ամսական՝ 16 շահառու):

Լոտ 1- Երևան մրցույթը երրորդ փուլով վերահայտարարվել է 7 ամսվա համար մայիսի 6-ին, կրկին ոչ մի հայտ չի ներկայացվել: Մրցույթը չի կայացել>>:

Թիվ 6. Հաշվեքննության օբյեկտի պարզաբանումները- 1205-12024 ծրագրի շահառուների թվաքանակի հետ կապված

-1205-12024 միջոցառման շահառուների թիվը նշված է 56, մինչդեռ <<Կառավարության 2021 թվականի փետրվարի 11-ի N 158-Ն որոշման համաձայն 51 է:

Հաշվեքննողների արձագանքը թիվ 6-ի վերաբերյալ-Կատարվել է համապատասխան ճշգրտում:

Թիվ 7. Դրամաշնորհի մրցույթները ուշ հայտարարելու վերաբերյալ

Հաշվեքննության օբյեկտի պարզաբանումները- Դրամաշնորհների մրցույթները ուշ հայտարարելու վերաբերյալ նախարարությունը տեղեկացնում է, որ ՀՀ կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 1937-Ն որոշման հավելվածի 10-րդ կետի համաձայն 2020 թվականի դեկտեմբերի 15-ին կազմավորվել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի <<Մրցութային հանձնաժողովներ ստեղծելու և դրանց անհատական կազմը հաստատելու մասին>> թիվ 209-Ա/1 հրամանը, որից հետո հայտարարվել են դրամաշնորհային թվով 12 մրցույթները 2020 թվականի դեկտեմբերի 16-ին, և թվով 5 դրամաշնորհային մրցույթները՝ դեկտեմբերի 18-ին:

1032-11002 միջոցառման հետ կապված տեղեկացնում ենք, որ նախարարությունը դեկտեմբերին է հայտարարել դրամաշնորհի մրցույթը, քանի որ 2020 թվականի սեպտեմբեր-նոյեմբեր ամիսներին զբաղված է եղել Ադրբեջանի կողմից Արցախի դեմ սանձազերծած պատերազմի հետևանքները հաղթահարելով, ինչի արդյունքում ավելացված գումարը հետ է ուղարկվել ՀՀ պետական բյուջե: Բացի այդ, ցածր դիմելիությունը պայմանավորված էր կորոնավիրուսային համաճարակի վտանգով, որն ամսական կտրվածքով աստիճանաբար հաղթահարվել և հասցվել էր նախկին շեմին՝ փակ ռեժիմի վերացման պայմաններում:

1032-11003 միջոցառման հետ կապված տեղեկացնում ենք, որ նախարարությունը դեկտեմբերին է հայտարարել դրամաշնորհի մրցույթը, վերոգրյալ պատճառաբանությամբ:

1032-11004 միջոցառման հետ կապված տեղեկացնում ենք, որ նախարարությունը դեկտեմբերին է հայտարարել դրամաշնորհի մրցույթը, վերոգրյալ պատճառաբանությամբ: Միաժամանակ հայտնում ենք, որ լինելով հասարակական կազմակերպության հոգաժողության ներքո՝ տվյալ ոլորտը չի տուժել և շահառուները ստացել են խնամք:

Հաշվեքննողների արձագանքը թիվ 7-ի վերաբերյալ- Արձանագրված խնդիրը վերաբերվել է այն դեպքերին, երբ կատարողականների ցածր մակարդակը պայմանավորված է եղել որոշ դրամաշնորհի մրցույթներ ուշ հայտարարելու հետ: Այսինքն, եթե նախարարության կողմից մրցույթները հայտարարվեին ավելի վաղ՝ Գնումների մասին ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի համապատասխան, համաձայն, որի մինչև ֆինանսական միջոցներ նախատեսվելը նախարարությունը կարող էր կնքել պայմանագրեր՝ պայմանով, ապա կապահովվեր մատուցվող

ծառայությունների ավելի բարձր կատարողական: Միևնույն ժամանակ նշենք, որ նախորդ տարի նմանատիպ պայմանագրերը կնքվել էին պայմանով:

7. ՀԵՏՀՍԿՈՂԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

Նախարարության կողմից 2020 թվականի ՀՀ պետական բյուջեի երեք, վեց և ինն ամիսների կատարողականի նկատմամբ հաշվետվությունների ընթացքում արձանագրվել էին ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացված հաշվետվություն Ձև-2-ում նշված ցուցանիշների անհամապատասխանություններ, մասնավորապես առաջին եռամսյակի համար ներկայացված հաշվետվությունում չէր արտացոլվել թվով 18 ծրագրային միջոցառումների ընդամենը՝ 86,641.88 հազ. դրամի կատարողականների գումար, վեց ամիսների համար ներկայացված հաշվետվությունում չէր արտացոլվել թվով 19 ծրագրային միջոցառումների ընդամենը՝ 154,028,69 հազ. դրամի կատարողականների գումար, ինն ամիսների համար ներկայացված հաշվետվությունում չէր արտացոլվել թվով 8 ծրագրային միջոցառումների ընդամենը՝ 167,294.39 հազ. դրամի կատարողականների գումար: Նշված ժամանակաշրջանների ընթացիք եզրակացությունները կազմելիս արվել են առաջարկություններ նշված անհամապատասխանությունները, ինչպես նաև արձանագրված այլ փաստերը վերացնելու ուղղությամբ, որին ի պատասխան նախարարությունը տեղեկացրել է, որ ձեռնարկել է համապատասխան միջոցներ՝ համապատասխան հրամաններ, հանձնարարականներ, արձանագրված անհամապատասխանությունները և թերությունները վերացնելու ուղղությամբ: Արդյունքում ուսումնասիրելով 2020 թվականի տարեկան կատարման ցուցանիշների համապատասխանությունը ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացված հաշվետվություն Ձև-2-ում նշված ցուցանիշների հետ, անհամապատասխանություններ չեն արձանագրվել:

8. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը.

1. Գործուն միջոցներ ձեռնարկել 2021 թվականի ՀՀ պետական բյուջեի երեք ամիսների կատարողականի հաշվետվություններում երեք ամիսների ընթացքում կատարված փաստացի ծախսի գումարների մի շարք պատճառներով չներառված տվյալների գույքագրման ու ՀՀ ֆինանսների նախարարություն հաջորդիվ ներկայացվող հաշվետվություններում դրանց

- ամբողջական ներկայացնելու ուղղությամբ՝ այսուհետ հնարավորինս բացառելով նշված բնույթի ֆինանսական ցուցանիշների չներառումը ՀՀ պետական բյուջեի երեք ամիսների կատարողականի հաշվետվություններում:
2. Նախարարության համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումների միջոցով շարունակել խստագույնս հսկել բյուջետային հատկացումների ստորադաս կարգադրիչների և/կամ պայմանագրային կողմերի ֆինանսատնտեսական գործունեության արդյունքում ներկայացվող հայտերի/կատարողականների և սահմանված հաշվետվությունների՝ ժամանակին ու ամբողջական ներկայացնելու նկատմամբ:
 3. Միջոցներ ձեռնարկել ՀՀ պետական բյուջեով սահմանված ծախսերի ծրագրային ցուցանիշների թերակատարումները լրացնելու, ինչպես նաև գերակատարումները հնարավորինս բացառելու ուղղությամբ: Մասնավորապես գնման գործընթացները և այլ անհրաժեշտ նախապատրաստական աշխատանքներն իրականացնել պլանավորված պահանջարկի ժամկետների տրամաբանությամբ՝ պարտադիր հաշվի առնելով այդ գործընթացներում երևույթաբար առկա չկայանալու կամ ընթացքը բողոքարկելու <<Գնումների մասին>> ՀՀ օրենքով (ՀՕ-21), ինչպես նաև ՀՀ կառավարության 04.05.2017 N526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգով նախատեսված կարգավիճակները ու դրանց հետևանքում վրա հասնող ժամկետները:
 4. Վերագնահատել մի շարք սոցիալական ծրագրերի հաշվարկային թվերում նախատեսված շահառուների քանակները՝ համապատասխանեցնելով դրանք 2020 թվականի սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի Հանրապետության կողմից Արցախի Հանրապետության դեմ սանձազերծված պատերազմի հետևանքով շահառու դասված անձանց իրական քանակներին:
 5. Կատարողականների ցածր մակարդակից խուսափելու նպատակով դիտարկել գնումները <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետին համապատասխան իրականացնելու հնարավորությունները՝ այն է մինչև ֆինանսական միջոցներ նախատեսվելը նախարարությունը կարող էր կնքել պայմանագրեր՝ պայմանով, այն դեպքում, երբ նախորդ տարի նմանատիպ պայմանագրերը կնքվել էին պայմանով:
 6. Միջոցներ ձեռնարկել տարեկան և հաշվետու ժամանակաշրջանների ճշտված պլանների քանակային և արժեքային սխալ պլանավորված ցուցանիշները ճշգրտելու ուղղությամբ: Միևնույն ժամանակ վերստուգել վեց, ինն ամիսների և տարեկան պլանային ցուցանիշների ճշգրտությունը և անհրաժեշտության դեպքում կատարել համապատասխան ճշգրտումներ:

7. Միջոցներ ձեռնարկել ՀՀ ֆինանսների նախարարության,, Հայաստանի Հանրապետության 2021 թվականի առաջին եռամսյակի պետական բյուջեի ելքային ծրագրերի և միջոցառումների գծով արդյունքային (կատարողական) ցուցանիշների կատարման վերաբերյալ՝ ըստ միջոցառումները կատարող հանրային իշխանության մարմինների,, հաշվետվության հավելված 11.1-ի <<տարբերության պատճառները>> սյունակում նախարարության կողմից ներկայացված հաշվետու ժամանակաշրջանի ճշտված պլանի և փաստացի ցուցանիշների տարբերության պատճառները ներկայացվեն առավել իրական և հիմնավոր պատճառներ:
8. Ընթացիկ եզրակացությունում ներկայացված վերոնշյալ առաջարկությունների հիման վրա ընթացիկ տարվա համար (2021 թվական) մշակել և հաստատել միջոցառումների/գործողությունների ծրագիր, որը կպարունակի յուրաքանչյուր միջոցառման համար պատասխանատու ստորաբաժանում/ներ և միջոցառման կատարման իրատեսական ու ողջամիտ ժամանակացույց 2021 թվականի համար՝ ներկայացնելով պատճենը ՀՀ հաշվեքննիչ պալատ: